



ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՇԱՀԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԻ

Իրավաբանների հայկական ասոցիացիա
«Բյուջեները քաղաքացիների համար» ծրագիր

ԵՐԵՎԱՆ, 2023

Նպատակ ունենալով նպաստել Հայաստանում բյուջետային գործընթացների քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությանը և այդ ոլորտում փաստահեն շահերի պաշտպանության իրականացմանը, Իրավաբանների հայկական ասոցիացիան մշակել է սույն ուսումնասիրությունը օգտագործելով միջազգային և ազգային փորձը, միջազգային մասնագիտացված կազմակերպությունների նախագծած ուղեցույցները:

Սույն ուսումնասիրությունն իրականացվել «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Ուսումնասիրության բովանդակության համար պատասխանատու է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետը:

Ուսումնասիրությունը պատրաստել է «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի փորձագետ Մյուզաննա Մողոմոնյանը:

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1995 թ.-ին, նպատակ ունենալով ստեղծել հզոր քաղաքացիական հասարակություն և օժանդակել Հայաստանի՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության զարգացմանը: Կազմակերպությունը իր ներդրումն է ունեցել հակակոռուպցիոն և գողացված ակտիվների վերադարձման, մարդու իրավունքների և գենդերային հավասարության, բյուջետային գործընթացների, լավ կառավարման և օրենքի գերակայության ոլորտներում Հայաստանի հանրային քաղաքականությունների մշակման գործընթացում:

Եվրոպական միության ֆինանսավորմամբ գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ գործընկերներ՝ «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ազոբա Մենթորլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցությամբ: Ծրագրի հիմնական նպատակն է քաղաքացիական հասարակության մասնակցությամբ խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացին և նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ուժեղացմանը: Ծրագրի թիրախային ոլորտներն են արդարադատությունը, կրթությունը, սոցիալական ոլորտը և գյուղատնտեսությունը:

© Իրավաբանների հայկական ասոցիացիա 2023

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,

Նալբանդյան 7, գրասենյակային տարածք 2,

Հեռախոս: +374 10 540199

Էլ. փոստ՝ info@armla.am

Ինտերնետային կայք՝ <https://armla.am/>

Բովանդակություն

Ներածություն	5
1. Բյուջետային գործընթացի շահերի պաշտպանությունը՝ միջազգային փորձի լույսի ներքո	7
1.1. Ի՞նչ է նշանակում փաստահեն շահերի պաշտպանություն և ինչո՞ւ է այն կարևոր	7
1.2. Ինչպե՞ս են ընդունվում բյուջեի վերաբերյալ որոշումները և որո՞նք հիմնական խոչընդոտները	8
1.3. Բյուջեի պարբերաշրջանը և ինչպե՞ս ազդել դրա վրա.....	11
2. Տեղեկատվության հավաքագրումը.....	19
2.1. Տեղեկատվության հավաքագրման իրավական շրջանակը.....	19
2.2. Բաց բյուջեների հասկացությունը և բյուջեների թափանցիկության ապահովմանն ուղղված միջազգային նախաձեռնությունները.....	21
3. Բյուջեի նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու ՔՀԿ-ների հմտությունները ու գործիքները.....	26
3.1. Բյուջետային գործընթացում հանրային վերահսկողություն իրականացնելու հիմնական հմտությունները	26
3.2. Բյուջետային գործընթացում հանրային վերահսկողություն իրականացնելու հիմնական գործիքները	30
4. Բյուջետային գործընթացը և շահերի պաշտպանության փորձը Հայաստանի Հանրապետությունում.....	34
4.1. Պետական բյուջեի մշակման և ընդունման պարբերաշրջանը ՀՀ-ում.....	34
4.2. Բյուջետային գործընթացների շահերի պաշտպանության փորձը ՀՀ-ում.....	38
Եզրակացություն	43
Հղումներ	45

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԱԺ Ազգային ժողով
- ԲԿԳ Բաց կառավարման գործընկերություն
- ԵՄ Եվրոպական միություն
- ԻՀԱ Իրավաբանների հայկական ասոցիացիա
- ԿԵՀ Կառուցողական երկխոսության հանձնառություն
- ՀԲ Համաշխարհային բանկ
- ՀՀ Հայաստանի Հանրապետություն
- ՄԲ Մասնակցային բյուջետավորում
- ՄԺԾԾ Միջնաժամկետ ծախսերի ծրագրեր
- ՊԾՖՀ Պետական ծախսեր և ֆինանսական հաշվետվողականություն
- ՊՖԿ Պետական ֆինանսների կառավարում
- ՏԻՄ Տեղական ինքնակառավարման մարմին
- ՏԶՀԿ Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
- ՔՀԿ Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
- ՖՆ Ֆինանսների նախարարություն

Ներածություն

Վերջին երկու տասնամյակների ընթացքում քաղաքացիական հասարակության ներգրավումը բյուջետային գործընթացի տարբեր փուլերում դարձել է ձևավորված պրակտիկա: Կառավարություններն իրենց քաղաքականության նպատակները կենսագործում են բյուջեի միջոցով, հետևաբար, բյուջեի վերլուծությամբ և շահերի պաշտպանությամբ զբաղվելը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ներ) համար հանրային քաղաքականության և ծրագրերի վերաբերյալ որոշումների վրա ազդելու ամենաարդյունավետ միջոցներից մեկն է: ՔՀԿ-ները, որոնք օժանդակում են սոցիալական և տնտեսական զարգացման խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝ աղքատությունը, մարդու իրավունքները, առողջությունը և կրթությունը, եզրահագել են, որ պետական (հանրային) բյուջեների վրա ազդեցություն ունենալու ջանքերը պետք է ներառել իրենց շահերի պաշտպանության քաղաքականության մեջ, այն դիտարկելով նպատակին հասնելու արդյունավետ գործիք¹:

Պետական բյուջեն մասին կառավարության տարբեր քաղաքականություններն ամփոփող կարևոր ծրագրային փաստաթուղթ է, որն արտահայտում է, թե կառավարությունը հանրային ռեսուրսները ինչպե՞ս է նախատեսում օգտագործել, ո՞ր քաղաքական նպատակների համար, ինչպիսի՞ հանրային ծառայություններ և ի՞նչ ծավալով են մատուցվելու, և ի վերջո, ինչպիսի՞ արդյունքներ են ապահովվելու հանրության համար: Հետևապես, ՔՀԿ-ների բյուջեի հետ կապված գործունեությունը կարող է ներառել տարբեր ներքին քաղաքականություններ և ռազմավարություններ՝ սկսած բյուջետային գրագիտության հմտությունների վերապատրաստումից մինչև փաստահեն շահերի պաշտպանության իրականացում և այլընտրանքային պետական բյուջեի ձևավորում:

Շրջանակը. Այս ուսումնասիրությունը կենտրոնանում է այն գործիքների և ռազմավարությունների վրա, որոնց օգնությամբ ՔՀԿ-ները կարող են վերահսկել կառավարության, համայնքի կամ առանձին գերատեսչության բյուջեն, մասնակցել բյուջեի մշակման գործընթացին, կատարել հետազոտություններ և ներկայացնել փաստարկված առաջարկներ բյուջետային հայտերում փոփոխություններ կատարելու համար, ջատագովել՝ այդ առաջարկները ընդունելու և դրանք բյուջեում ինկորպորացնելու նպատակով: Ուսումնասիրությունը պատասխանում է նաև այն հարցերին՝ թե ի՞նչ հմտություններ են հարկավոր ՔՀԿ-ներին՝ վերը նշված խնդիրների լուծման նպատակով: Ներկայացվում են համառոտ օրինակներ այն համատեքստի մասին, որում ներդրվել է այս գործիքներից յուրաքանչյուրը:

Սույն փաստաթուղթը հիմնված է միջազգային փորձի և Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) բյուջետային գործընթացի շահերի պաշտպանության պրակտիկայի վրա:

Սույն ուսումնասիրությունը նախատեսված է ՔՀԿ-ների, բյուջետային ոլորտի փորձագետների և բյուջետային գործընթացներով հետաքրքրված այլ շահագրգիռ կողմերի համար, որոնք մասնակցում են պետական և համայնքային բյուջեի մշակման գործընթացին, կարևորում են Հայաստանում մասնակցային բյուջեների ինստիտուտի կատարելագործումը,

¹ Տե՛ս Միջազգային բյուջետային գործընկերության «Բյուջեի շահերի պաշտպանության հնարավորությունների և շահագրգիռ կողմերի վերլուծությունը»: Հասանելի է հետևյալ հղմամբ.
<https://internationalbudget.org/publications/analyzing-budget-advocacy-opportunities-and-stakeholders/>

փաստարկված առաջարկների ներկայացումը և շահերի պաշտպանության իրականացումը, ինչպես նաև կառավարության որոշումների վրա ազդեցություն ունենալը:

Մեթոդոլոգիա. Ուսումնասիրությունը պատրաստել է Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ)՝ Եվրոպական միության կողմից ֆինանսավորված «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում: Ուսումնասիրությունը պատրաստվել է գրասենյակային հետազոտությունների (desk review) և օրենսդրության վերլուծությունների մեթոդով՝ օգտագործելով միջազգային և ազգային փորձը, միջազգային մասնագիտացված կազմակերպությունների նախագծած ուղեցույցները:

1. Բյուջետային գործընթացի շահերի պաշտպանությունը՝ միջազգային փորձի լույսի ներքո

1.1. Ի՞նչ է նշանակում փաստահեն շահերի պաշտպանություն և ինչո՞ւ է այն կարևոր

Բյուջեի փաստահեն շահերի պաշտպանությունը (Evidence-based budget advocacy) (այսուհետ նաև՝ ջատագովություն) բյուջեի վերլուծության և շահերի պաշտպանության ռազմավարության համակցությունն է: Այն պահանջում է պետական բյուջեների մանրակրկիտ ուսումնասիրություն, որի միջոցով բացահայտվում են ջատագովության այն ոլորտները, որտեղ կարող են հատկացվել կամ վերաբաշխվել պետական միջոցները, ինչին էլ հաջորդում է ռազմավարական քարոզչությունը՝ փոփոխություններ իրականացնելու նպատակով²:

Բյուջեի եկամուտների (օրինակ՝ որքան գումար է մուտքագրվում) և ծախսերի (որքան գումար է ծախսվում) վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովումը, հնարավոր խնայողությունները և անարդյունավետությունը, ինչպես նաև շահերի պաշտպանության խնդրի լուծման ամենարդյունավետ գործիքների ընտրությունը հանդիսանում են փաստահեն շահերի պաշտպանության կարևոր բաղադրիչները: Բյուջեի փաստահեն շահերի պաշտպանությունը նշանակում է իրականացնել գիտելիքահեն և փաստահեն հետազոտություններ և վերլուծություններ, որոնք կծառայեն իբրև ապացույցներ՝ պետական բյուջեի բաշխման ցանկալի փոփոխությունը ջատագովելու համար:

Միջազգային բյուջետային գործընկերությունը բյուջեի շահերի պաշտպանությունը սահմանում է որպես կառավարությունների բյուջեի ընտրությունների վրա ազդելու ռազմավարական մոտեցում, որն ուղղված է հստակ և կոնկրետ արդյունքներ նվաճելուն: Օրինակ աղքատության նվազեցում, բարելավված կառավարում և այլն³:

Բյուջեի ջատագովության վերջնական նպատակը՝ թիրախային ոլորտներում կայուն և արդյունավետ ներքին ֆինանսավորման նախատեսումն է, որը հարմարեցվում է տվյալ երկրում մարդկանց կարիքներին:

Բյուջեի փաստահեն շահերի պաշտպանությունը կարող է ծառայել հետևյալ նպատակներին.

- կատարել ոլորտային քաղաքականության ու բյուջեների փոփոխություններ և լրացումներ ազգային և տեղական մակարդակներում,
- նպաստել և բարելավել բյուջետային գործընթացների թափանցիկությունն և հաշվետվողականությունն ազգային և տեղական մակարդակներում,
- աջակցել պետական միջոցների առավել արդյունավետ օգտագործմանը՝ բյուջեի կատարողականի մշտադիտարկման միջոցով,
- նվազեցնել ծախսերի անարդյունավետությունը՝ վեր հանելով արտահոսքերը և խոչընդոտները,

² Հարկ է նկատի ունենալ, որ բյուջեի շահերի պաշտպանությունը ներառում է նաև պետական բյուջեի վերանայում՝ պարզելու, թե արդյոք պետական բյուջեի կատարումը համապատասխանում է շահերի պաշտպանության ուղղված ջանքերին:

³ Տե՛ս Միջազգային բյուջետային գործընկերության «Բյուջետային գործընթացի շահերի պաշտպանության կողմնորոշում»: Հասանելի է հետևյալ հղմամբ. www.internationalbudget.org/budget-advocacy/orientation/

- հզորացնել և զարգացնել քաղաքացիական հասարակությանը և համայնքներին՝ մասնակցելով բյուջետային գործընթացին և ազդելով որոշումների կայացման գործընթացների վրա,
- իրազեկել հանրային քննարկումների մասին՝ տրամադրելով կոնկրետ ոլորտների հետ կապված բյուջեի և քաղաքականության առաջարկների օբյեկտիվ վերլուծություն⁴:

Պետք է նշել, որ բյուջեի վերլուծությունը և բյուջեի շահերի պաշտպանությունը ՔՀԿ-ների համար կարող են լինել գործունեության նոր ուղղություններ, հետևապես այն պահանջում է որոշակի կարողությունների զարգացում: Այս ուղղությունը նաև ենթադրում է բյուջեի վերաբերյալ տեղեկատվության շարունակական վերլուծություն, որը թույլ կտա գնահատել շահերի պաշտպանության ջանքերի արդյունքում առաջացած ցանկացած փոփոխություն:

Ի՞նչ Ձեռնարկել ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1	ՔՀԿ-ները կարող են կապ հաստատել իրենց երկրում բյուջեի ջատագովության ուղղությամբ գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ, սովորել նրանց փորձից և ձևավորել ռազմավարական գործընկերություն:
---------------------------------------	---

Բյուջեի շահերի պաշտպանության աշխատանքում ներգրավվելիս կարևոր է նկատի ունենալ պետական (հանրային) ֆինանսների կառավարման և հանրային տնտեսագիտության հետևյալ հիմնարար սկզբունքները.

1. **Պետական բյուջեները սահմանափակ են**, ինչպես ցանկացած այլ ռեսուրս աշխարհում: Մա նշանակում է, անկախ նրանից, թե մենք որքան ջանք ենք գործադրում, կան որոշակի սահմաններ, որի շրջանակներում պետք է իրականացվի ջատագովությունը:
2. **Պետական մարմիններն ու տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ-երը) ունեն մի շարք մրցակցային կարիքներ և առաջնահերթություններ, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է միջոցներ:** Հետևապես, երբ որևէ գործողության կամ ոլորտի համար հատկացվում է ֆինանսավորումը, սրանով նվազեցնում է մեկ այլ գործունեության կամ ոլորտի համար հասանելի ռեսուրսները:
3. **Պետական ֆինանսներ գոյություն չունեն:** Պետական բյուջեի ցանկացած գումար հավաքագրվել է հասարակությունից կամ համայնքից, որը իրականացվում է եկամուտների հավաքագրման տարբեր գործիքների միջոցով (օրինակ՝ հարկեր, պետական տուրքեր, պարտադիր այլ վճարներ և այլն)⁵:

1.2. Ինչպե՞ս են ընդունվում բյուջեի վերաբերյալ որոշումները և որո՞նք հիմնական խոչընդոտները

Բյուջետային որոշումները ընդունվում են երկրի սոցիալական, տնտեսական և քաղաքական պայմաններով և հատուկ են կոնկրետ երկրին: Որպես բյուջեի ջատագով,

⁴ Տե՛ս «Պատրաստվելով ոլորտային բյուջետային քարոզչությանը: Ուղեցույց քաղաքացիական հասարակության և համայնքների համար» ուղեցույցը: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://hri.global/wp-content/uploads/2022/10/HRI-BUDGET-ADVOCACY-GUIDE-PAGES.pdf>

⁵ Տե՛ս «Պատրաստվելով ոլորտային բյուջետային քարոզչությանը: Ուղեցույց քաղաքացիական հասարակության և համայնքների համար» ուղեցույցը: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://hri.global/wp-content/uploads/2022/10/HRI-BUDGET-ADVOCACY-GUIDE-PAGES.pdf>

փոփոխությունն իրականացնելու համար պետք է գնահատել այն միջավայրը, որտեղ շահերի պաշտպանություն իրականացնող սուբյեկտը աշխատում է՝ բացահայտելով այն գործոններն ու պայմանները, որոնք կարող են շահերի պաշտպանության վրա ունենալ դրական կամ բացասական ազդեցություն:

Ստորև ներկայացված օրինակները կարող են ծառայել որպես վերը նշված պայմանների ուղենիշներ:

Իրավական միջավայր, հարկաբյուջետային թափանցիկություն և քաղաքացիական հասարակության մասնակցություն. որոշ երկրներ ունեն իրավական, քաղաքական կամ գործնական խոչընդոտներ, որոնք դժվարացնում են տարբեր ոլորտների բյուջետային գործընթացի փուլերում ներգրավվելը, բյուջեները վերլուծելու համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, բյուջեի վերլուծության ժամանակին կատարումը: Հարկաբյուջետային թափանցիկության բացակայությունը կարող է խանգարել բյուջետային գործընթացներում ակտիվ մասնակցությանը, սահմանափակել այն հնարավորությունները, որոնցով կարելի է պարտավորեցնել կառավարությանը լինել հաշվետու:

ԻՆՉ ՁԵՌՆԱՐԿԵԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2	ՔՀԿ-ները կարող են ուսումնասիրել իրենց երկրում բյուջետային գործընթացների թափանցիկության մակարդակը: Ուսումնասիրության աղբյուրներից կարող են դիտարկվել մասնագիտացված ՔՀԿ-ների կատարած վերլուծություններն ու հետազոտությունները, Միջազգային բյուջետային գործընկերության հետազոտությունները ⁶ :
--------------------------------------	---

Կոռուպցիա. երկրների պետական հատվածում կոռուպցիայի դրսևորումներն ու դրանց բնույթը տարբեր են: Այն ոլորտները, որոնք կոռուպցիայի տեսանկյունից առավել ռիսկային են, որպես կանոն հանրային իշխանությունների կողմից չեն բարձրաձայնվում: Ռիսկային ոլորտները բավականին տարբեր են, դրանք կարող ենք ներառել պետական գնումներ, մասնավոր ոլորտ, արտոնությունների և թույլտվությունների տրամադրում, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց հայտարարագրեր ու շահերի բախում, և այլն:

ԻՆՉ ՁԵՌՆԱՐԿԵԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3	ՔՀԿ-ները կարող են ուսումնասիրել իրենց երկրում կոռուպցիայի ընկալման մակարդակը: Ուսումնասիրության աղբյուրներից կարող են դիտարկվել մասնագիտացված ՔՀԿ-ների կատարած վերլուծություններն ու հետազոտությունները, Կոռուպցիայի ընկալման համաթիվը ⁷ :
--------------------------------------	---

Քաղաքական անկայունություն և չնախատեսված քաղաքական փոփոխություններ. ցանկացած երկրի քաղաքական իրավիճակը կարող է ազդեցություն ունենալ բյուջեի շահերի պաշտպանության գործընթացի հաջողության վրա: Այս գործոնները, իհարկե, դժվար է կանխատեսել, և հնարավոր է, որ դրանց լուծումն ու համապատասխան արձագանքը ստեղծի

⁶ Տե՛ս Միջազգային բյուջետային գործընկերության 2021 թվականի Բաց բյուջեի հետազոտությունը: Հասանելի է հետևյալ հղմամբ: <https://internationalbudget.org/open-budget-survey>
⁷ Տե՛ս 2022 թվականի Կոռուպցիայի ընկալման համաթիվը: Հասանելի է հետևյալ հղմամբ: <https://www.transparency.org/en/cpi/2022>

լրացուցիչ դժվարություններ, եթե առկա չէ նման դեպքերի համար նախապես մշակած ռազմավարություն:

Իրավական շրջանակ. Նախքան բյուջեի շահերի պաշտպանության գործընթացը սկսելը, անհրաժեշտ է համոզվել, որ շահերի պաշտպանության իրականացման նպատակը իրավական տեսանկյունից իրագործելի է և առկա չեն օրենսդրական խոչընդոտներ: Իրավական շրջանակը ներառում է ազգային իրավական ակտերը (սահմանադրություն, պետական բյուջեի մասին օրենք, այլ օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր՝ որոշում, հրամաններ, կարգադրություններ), ազգային հանրային քաղաքականությունները (ոլորտային ռազմավարական ծրագրերը, հայեցակարգերը) և միջազգային փաստաթղթերը (կոնվենցիաները, համաձայնագրեր, պայմանագրեր, օրինակ՝ ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոնվենցիան մասնակից պետությունների համար սահմանում է պարտավորություն՝ ապահովել երեխաների պարտադիր և անվճար տարրական կրթություն)⁸:

ԻՆՉ ՁԵՌՆԱՐԿԵԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4	Նախքան բյուջեի շահերի պաշտպանության գործընթացի մեկնարկը ՔՀԿ-ներին խորհուրդ է տրվում ուսումնասիրել թիրախային ոլորտի իրավական կարգավորումները, պետության միջազգային պարտավորությունները (հանձնառությունները), դրանց կատարման մակարդակն ու գնահատականները, մասնագիտացված ՔՀԿ-ների կատարած վերլուծությունները, հետազոտությունները և այլընտրանքային հասարակական մշտադիտարկման զեկույցները:
--------------------------------------	---

Հասկանալ պետական բյուջեն, դրա ձևաչափը և հիմնական օրենսդրությունը. Պետական բյուջեն հեռանկարային փաստաթուղթ է, որը սահմանում է, թե որքան գումար է (օրինակ՝ եկամուտները) մուտքագրվում, որտեղից է այն գալիս և ինչ նպատակով է այն ծախսվելու (օրինակ՝ ծախսերը): Այն սովորաբար ընդգրկում է որոշակի ժամանակահատված, որը հաճախ կոչվում է ֆինանսական տարի և արտացոլում է գործող կառավարության քաղաքականության առաջնահերթությունները⁹:

Պետական բյուջեի եկամուտների և ծախսերի հնարավոր տեսակները ներկայացված են ստորև¹⁰:


⁸ Տե՛ս Կրթության ոլորտում աշխատող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար բյուջետային գործընթացի ուղեցույցը: Հասանելի է հետևյալ հղմամբ.

<https://docs.campaignforeducation.org/csef/CEF%20Budget%20Guide%20for%20CSOs.pdf>

⁹ Տե՛ս Առողջապահության ոլորտում բյուջեի շահերի պաշտպանության իրականացման ուղեցույցը՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար: Հասանելի է հետևյալ հղմամբ.

<https://resourcecentre.savethechildren.net/pdf/6147.pdf>

¹⁰ Տե՛ս «Պատրաստվելով ոլորտային բյուջետային քարոզչությանը: Ուղեցույց քաղաքացիական հասարակության և համայնքների համար» ուղեցույցը: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://hri.global/wp-content/uploads/2022/10/HRI-BUDGET-ADVOCACY-GUIDE-PAGES.pdf>:




Պետական բյուջեն կարևորագույն փաստաթուղթ է, որը ներկայացնում է հանրային քաղաքականությունը և կառավարության պարտավորություններն ու հանձնառությունները՝ ուղղված հասարակության բարեկեցությանը: Այն հիմնվում է պետական քաղաքականության և առաջնահերթությունների վրա և ապահովում դրանց կատարումը, հետևաբար, խիստ կարևոր է, որ շահերի պաշտպանություն իրականացվի այն ոլորտներում, որոնք ներառված են ազգային քաղաքականության փաստաթղթերում կամ կառավարության կողմից ճանաչված են գերակա ուղղություն:

<p>ԻՆՉ ՁԵՌՆԱՐԿԵԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5</p>	<p>ՔՀԿ-ները կարող են ստուգել՝ արդյո՞ք թիրախային ոլորտը ընդգրկված է կառավարության գերակա ուղղությունների շարքում: Եթե ստուգման ընթացքում պարզ է դառնում, որ այդ ոլորտը ներառված չէ գերակա ուղղությունների շարքում կամ ազգային քաղաքականության փաստաթղթերում, հաջորդիվ կարող են ուսումնասիրել այդ ոլորտում պետության ստանձնած հիմնական միջազգային պարտավորություններն ու հանձնառությունները (օրինակ՝ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները), որից բխեցնելով կարող են կառուցել իրենց շահերի պաշտպանության գործընթացը:</p>
---	--

1.3. Բյուջեի պարբերաշրջանը և ինչպե՞ս ազդել դրա վրա

Պետական բյուջեն սահմանում է, թե ինչպես է կառավարությունը հավաքելու միջոցները (եկամուտները) և դրանք բաշխելու տարբեր պետական համակարգի մարմինների, ՏԻՄ-երի և այլ կառույցների միջև, որոնք պատասխանատու են տարաբնույթ գործառույթների իրականացման համար, այդ թվում հանրության ծառայություններում մատուցելու համար: Բյուջետային

գործընթացը ունի իր պարբերաշրջանը, և այն, որպես կանոն, տեղի է ունենում մեկ տարվա ընթացքում: Պարբերաշրջանը ներկայացված է ստորև¹¹:



Միջազգային փորձի համաձայն Բյուջետային գործընթացի պարբերաշրջանը ունի չորս հիմնական փուլեր, որոնք ներկայացված են ստորև:

Փուլ 1. Բյուջեի ձևավորում

Բյուջեի վերաբերյալ փաստաթուղթը սովորաբար մշակվում է Ֆինանսների նախարարության (ՖՆ) բյուջետային գրասենյակի կողմից: Սա, ընդհանուր առմամբ, բյուջեի պարբերաշրջանի այն փուլն է, որտեղ հանրային մասնակցությունը ցածր է և դիտարկվում է որպես «տեխնիկական» փուլ:

Բյուջեի ձևավորումը հիմնված է տնտեսական աճի, գնաճի, ժողովրդագրական փոփոխությունների և ազգային այլ կանխատեսումների վրա: Այն արտացոլում է այնպիսի նպատակներ, ինչպիսիք են՝ հարկերի բարձրացումը կամ իջեցումը, համաձայնեցված առաջնահերթությունների կատարման ուղղությամբ ծախսերի ավելացումը: Այս համընդհանուր շրջանակը ներառում է ճյուղային նախարարությունների և գերատեսչությունների կողմից իրականացվող ծրագրերը: Այնուհետև, այդ սուբյեկտները պատասխանատու են իրենց ոլորտային բյուջեների կազմման համար:

¹¹ Տե՛ս «Պատրաստվելով ոլորտային բյուջետային քարոզչությանը: Ուղեցույց քաղաքացիական հասարակության և համայնքների համար» ուղեցույցը: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://hri.global/wp-content/uploads/2022/10/HRI-BUDGET-ADVOCACY-GUIDE-PAGES.pdf>

Բյուջեի ձևավորման գործընթացը կարող է լինել *ներքևից վերև* կամ *վերևից ներքև*, կամ այս երկու մոտեցումների համակցություն: «*Ներքևից վերև*» մոտեցումը նշանակում է, որ իրավասու ոլորտային մարմինները (օրինակ՝ Արդարադատության նախարարությունը, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը) մշակում են բյուջե՝ իրենց առաջնահերթությունները լուծելու նպատակով, և այն կոնսոլիդացվում է կենտրոնական մակարդակում (ՖՆ-ի կողմից): «*Վերևից ներքև*» մոտեցումը նշանակում է, որ ՖՆ-ը եկամուտներ է հատկացնում ոլորտներին, իսկ իրավասու մարմինները մշակում են իրենց բյուջեն հատկացված ռեսուրսների շրջանակներում: Կան նաև երկրներ (օրինակ՝ Ինդոնեզիա), որոնք բյուջեի տեղաբաշխումներ կատարելու համար օգտագործում են հատուկ բանաձևեր՝ հիմնված բնակչության թվի կամ կարիքահեն չափանիշների վրա: Այդուհանդերձ, համարվում է, որ բանաձևի վրա հիմնված հատկացումների գործընթացում թափանցիկությունը ոչ միշտ է, որ ապահովվում է և այս փորձը հանրային ֆինանսների կառավարման «լավագույն փորձ» չի համարվում¹²:

Բյուջեի պարբերաշրջանի այս փուլը բաղկացած է երկու ենթափուլից՝ (1) քաղաքականության առաջնահերթությունների սահմանում և (2) ծրագրային և բյուջետային պլանավորում:

Ինչպե՞ս ներգրավվել գործընթացում

Ջատագովություն իրականացնողները սովորաբար ունեն մեծ հետաքրքրություն բյուջեի ձևավորման փուլում ներգրավվելու համար: Մյուս կողմից էլ, ներկայում կառավարությունը և դոնոր կազմակերպությունները ընդունում են այն փաստը, որ քաղաքացիները և ՔՀԿ-ները կարևոր դեր են խաղում հանրային ռեսուրսները դրա իրական շահառուներին հասցնելու ուղղությամբ: Արդյունքում, բյուջետային գործընթացում ներգրավվումը դարձել է քաղաքացիական հասարակության համար կարևոր ռազմավարություն, որը նպատակ ունի բարձրացնելու հաշվետվողականությունը, նվազեցնելու կոռուպցիան, նվազագույնի հասցնել հանրային միջոցների արտահոսքը և բարելավել հանրային ծառայությունների մատուցումը:¹³

Մի շարք երկրներում հանրային իշխանությունները եկել են այն մոտեցմանը, որ քաղաքացիական հասարակության հետ համատեղ աշխատանքը և նրանց՝ բյուջեի քննարկումներում և որոշումների կայացման գործընթացում ընդգրկելը, կարող է օգտակար լինել: ՔՀԿ-ները կարող են օժանդակել իրավասու մարմիններին ստանալ կարևոր տեղեկատվություն հանրության իրական կարիքների և առաջնահերթությունների մասին, ինչպես նաև աջակցել որոշում կայացողներին՝ բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային կարծիքների տրամադրման հարցում:

Ի՞նչ նվաճում կունենան ՔՀԿ-ները՝ մասնակցության արդյունքում

Կախված շահերի պաշտպանության նպատակներից, բյուջեի ձևավորման փուլին մասնակցելու արդյունքը կարող է.

¹² Տե՛ս «Պատրաստվելով ոլորտային բյուջետային քարոզչությանը: Ուղեցույց քաղաքացիական հասարակության և համայնքների համար» ուղեցույցը: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://hri.global/wp-content/uploads/2022/10/HRI-BUDGET-ADVOCACY-GUIDE-PAGES.pdf>

¹³ Տե՛ս «Քաղաքացիական հասարակության կողմից բյուջետային գործընթացի մոնիթորինգ» ուղեցույցը: Հասանելի է հետևյալ հղմամբ. https://knowledgehub.transparency.org/assets/uploads/helpdesk/CSO_budget_monitoring_2016.pdf

1. **ազդել ծառայությունների բովանդակության վրա** (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ոլորտում առկա ծառայությունների ավելացում, ընդլայնում կամ փոփոխում),
2. **աջակցել բյուջետային մարմիններին** (օրինակ՝ սոցիալական հարցերի նախարարությանը) վերանայել բյուջեի նախագծում ընդգրկված ծառայությունների փաթեթը, և նախատեսել այնպիսի ծառայություններ, որոնք կարիքահեն են և կնպաստեն այդ ոլորտի շահառուների բարելավմանը:

Որպես կանոն բյուջետային մարմինները ունենում են սահմանափակ ժամանակ և կարողություններ՝ մանրամասն ուսումնասիրելու յուրաքանչյուր ծառայություն բյուջեի առաջարկը: ՔՀԿ-ների գիտելիքները, փորձը և տեղեկատվությունը կարող է էական ազդեցություն ունենալ բյուջետային գործընթացում որոշումների վրա:

Որո՞նք են ՔՀԿ-ներին ներգրավվելու հիմնական խոչընդոտները

- ֆիսկալ թափանցիկության բացակայությունը,
- կոռուպցիոն դրսևորումները,
- համախոհների, ռազմավարական գործընկերների և գործընթացի նկատմամբ իրական ազդեցության բացակայությունը,
- պետական գերատեսչությունների շրջանում ՔՀԿ-ների մասնակցության փորձի վերաբերյալ տեղեկացվածության պակասը,
- բյուջետային գործընթացների վրա ազդեցություն ունենալու տեսանկյունից շահերի պաշտպանություն իրականացնող ՔՀԿ-ների կամ առանձին մասնագետների սահմանափակ գիտելիքները, կարողությունները և հմտությունները,
- սոցիալական գործընկերության բացակայությունը:

Փուլ 2. Բյուջեի ընդունում

Մույն գործընթացը որպես կանոն կազմակերպվում է հետևյալ կերպ. ՖՆ-ը բյուջեի նախագիծը ներկայացնում է հանրային լսումների և օրենսդիր մարմնի (օրինակ՝ խորհրդարանի) հաստատմանը: Բյուջեի նախագիծը քննարկվում է օրենսդիր մարմնում, հաստատվում (երբեմն՝ փոփոխություններով), այնուհետև ընդունվում է համապատասխան օրենքը: Այս փուլը սովորաբար տեղի է ունենում, երբ բյուջեի մասին տեղեկատվությունը դառնում է հանրությանը հասանելի¹⁴:

Ինչպե՞ս ներգրավվել գործընթացում

Այս փուլը, ընդհանուր առմամբ, ներառում է հանրային քննարկումների և լսումների կազմակերպում, և սա լավ հնարավորություն է ջատագովել այն հարցերի և առաջնահերթությունների շրջանակը, որոնք ներառված չեն բյուջետային հայտերի նախագծերում, կամ ներառված են, սակայն անհրաժեշտ են փոփոխությունների և լրացումների կատարում: Դա կարող է արվել քաղաքացիական հասարակության մասնակցությամբ հանրային լսումներին, կամ «բարեկամ օրենսդիր» (friendly legislator) միջոցով (օրինակ՝ խորհրդարանի այն

¹⁴ Տե՛ս «Պատրաստվելով ոլորտային բյուջետային քարոզչությանը: Ուղեցույց քաղաքացիական հասարակության և համայնքների համար» ուղեցույցը: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://hri.global/wp-content/uploads/2022/10/HRI-BUDGET-ADVOCACY-GUIDE-PAGES.pdf>

անդամի միջոցով, որը համախոհ կամ գաղափարակից է այն հարցերի և առաջնահերթությունների վերաբերյալ, որոնց ուղղությամբ ՔՀԿ-ները իրականացնում են ջատագովություն):

Հարկ է ևս մեկ անգամ ընդգծել, որ ՔՀԿ-ները կարող են նաև նպաստել բյուջեի ընդունման գործընթացին¹⁵՝ օգտագործելով իրենց տեխնիկական հմտությունները և վերլուծելու բյուջեները կամ բյուջետային հայտերը, որին կհաջորդի այդ վերլուծությունների և վերհանված խնդիրների ու առաջարկների քննարկումը կառավարության, համայնքի և խորհրդարանի հետ՝ Կառավարություն/Խորհրդարան/ՏԻՄ և ՔՀԿ կառուցողական երկխոսության ձևաչափով: Այս համատեքստում ճիշտ է նկատել, որ թեև հաշվեքննիչ պալատները կարևոր դեր են խաղում կոռուպցիայի դեմ պայքարում, լավ կառավարումը դյուրացնելու և պետական ֆինանսների կառավարումն առավել արդյունավետ դարձնելու գործում, սակայն նրանց կարողությունները և գործադիր իշխանությունից իրական անկախությունը հաճախ սահմանափակ են, հատկապես զարգացող երկրներում: Նման պայմաններում ՔՀԿ-ների դերը՝ որպես բյուջեների նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնող օղակի, չափազանց կարևոր է:

Այս զարգացումների արդյունքում ՔՀԿ-ների ներգրավվածությունը բյուջեների մշակման գործընթացում արդեն դարձել է պրակտիկա: Համաձայն Միջազգային բյուջետային գործընկերության ներկայացրած վիճակագրության՝ բյուջետային գործընթացներում ՔՀԿ-ների դերը վերջին տասնամյակներում անհամեմատելի աճ է գրանցել: Ավելացել է նաև այն երկրների թիվը, որոնք ՔՀԿ-ներին մասնակից են դարձնում բյուջեների քննարկման գործընթացներին: Համեմատության համար հարկ է նշել, որ 1990-ականների վերջերին ընդամենը մի քանի երկիր էր, որ ուներ ՔՀԿ-ների հետ աշխատելու պրակտիկա: Այս ՔՀԿ-ներն էլ իրենց հերթին շատ փոքր թիվ էին կազմում: Այսօր այդ պրակտիկան ներդրված է 100-ից ավելի երկրներում՝ հարյուրավոր կազմակերպությունների մասնակցությամբ: Ավելին, ՔՀԿ-ները զարգացրել են նաև ֆիսկալ եկամուտների և պետական բյուջեների վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու, համեմատելու, գնահատելու, մեկնաբանելու, պարզեցնելու և շարունակական հիմունքներով տարածելու իրենց հմտությունները¹⁶:

Ի՞նչ տեղեկատվություն է անհրաժեշտ այս փուլում ջատագովություն իրականացնելու համար և որն է ջատագովության նպատակը

Այս գործընթացում ՔՀԿ-ներին անհրաժեշտ կլինի այն նույն տեղեկատվությունը, որը պահանջվել է բյուջեի ձևավորման փուլում: Այստեղ ՔՀԿ-ների հիմնական նպատակն է համոզվել, որ նրանց կողմից ջատագովված ծառայությունների և առաջնահերթությունների ֆինանսավորումը հաստատված և ընդունված է: Եթե այս ծառայությունները և առաջնահերթությունները ներառված չեն բյուջեի ընթացիկ առաջարկներում (բյուջետային հայտերի նախագծերում), հարկավոր է օգտագործել հանրային լսումները և քննարկումների հարթակը՝ դրանք ջատագովելու նպատակով: Արդյունավետ ջատագովության արդյունքում, օրենսդիրը (օրինակ՝ խորհրդարանը) կարող է հետ վերադարձվել բյուջեի նախագիծը գործադիր մարմին՝ (օրինակ՝ ՖՆ-ը) և առաջարկել դրանում կատարել փոփոխություններ և լրացումներ:

¹⁵ Տե՛ս Միջազգային բյուջետային գործընկերության փորձը հետևյալ կայքում. www.internationalbudget.org

¹⁶ Տե՛ս «Քաղաքացիական հասարակության կողմից բյուջետային գործընթացի մոնիթորինգ» ուղեցույցը: Հասանելի է հետևյալ հղմամբ.

https://knowledgehub.transparency.org/assets/uploads/helpdesk/CSO_budget_monitoring_2016.pdf

Ի՞նչ նվաճում կունենան ՔՀԿ-ները՝ մասնակցության արդյունքում

ՔՀԿ-ների կողմից ջատագովված ծառայությունները և առաջնահերթությունները կարող են ընդգրկվել բյուջեի նախագծում: Բացի այդ, բյուջեի նախագծից կարող են հանվել այն ծառայություններն ու առաջնահերթությունները, որոնք այդ պահի դրությամբ իրականում առաջնային չեն և չեն բխում պետության և հասարակության իրական կարիքներից:

Որո՞նք են ՔՀԿ-ներին ներգրավվելու հիմնական խոչընդոտները

- ֆիսկալ թափանցիկության բացակայությունը,
- պետական գերատեսչությունների շրջանում ՔՀԿ-ների մասնակցության փորձի վերաբերյալ տեղեկացվածության պակասը,
- բյուջետային գործընթացների վրա ազդեցություն ունենալու տեսանկյունից շահերի պաշտպանություն իրականացնող ՔՀԿ-ների կամ առանձին մասնագետների սահմանափակ գիտելիքները, կարողությունները և հմտությունները,
- համախոհների, ռազմավարական գործընկերների և գործընթացի նկատմամբ իրական ազդեցության բացակայությունը:

Փուլ 3. Բյուջեի կատարում

Կառավարությունը կատարում է բյուջեն՝ տրամադրելով համապատասխան միջոցներ և իրականացնելով ծախսերի մոնիթորինգ, որը նպատակ ունի բյուջեի կատարումը համապատասխանեցնել բյուջեին նպատակին և առաջնահերթություններին: Հարկ է նշել, որ ֆինանսավորման հատկացումները միշտ չէ, որ պահպանվում են, այսինքն՝ ոչ բոլոր հատկացված միջոցներն են ծախսվում:

Ինչպե՞ս ներգրավվել գործընթացում

Բյուջեի կատարումը դժվար գործընթաց է և դրանում ներգրավվելը կարող է ներկայացնել որոշակի դժվարություններ: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ այն կարճաժամկետ է (որպես կանոն, բյուջեն ունի մեկ տարվա պարբերաշրջան), և շահերի պաշտպանություն իրականացնող ՔՀԿ-ները այս գործընթացում ներգրավվելու տարբեր գործիքներ են կիրառում: Դրանցից, թերևս առավել կիրառվողներից է բաց բյուջեների հետազոտությունների կատարումը և հանրային վերահսկողության իրականացումը: Առաջին գործիքի՝ բաց բյուջեների հետազոտությունների հիմնական նպատակն է՝ օգտագործելով միջազգայնորեն ընդունված չափանիշներ գնահատել պետական բյուջեի մասին տեղեկատվության հանրային հասանելիությունը, հանրության համար պետական բյուջեին առնչվող բյուջետային գործընթացին մասնակցելու՝ ազգային օրենսդրությամբ նախատեսված հնարավորությունները, և բյուջետային վերահսկողության ինստիտուտների, որոնք են՝ օրենսդիր և ազգային հաշվեքննիչ մարմինների, դերն ու գործառույթների իրականացման արդյունավետությունը¹⁷:

Հանրային վերահսկողության իրականացման գործիքներից է մասնակցային բյուջետավորումը, այլընտրանքային բյուջեները, սոցիալական աուդիտներ, որոնք անդրադարձ

¹⁷ Տե՛ս Միջազգային բյուջետային գործընկերության 2021 թվականի Բաց բյուջեի հետազոտությունը: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://internationalbudget.org/open-budget-survey>

է կատարվում սույն ուսումնասիրության «Բյուջետային գործընթացում հանրային վերահսկողություն իրականացնելու հիմնական գործիքները» մասում:

Ի՞նչ տեղեկատվություն է անհրաժեշտ այս փուլում ջատագովություն իրականացնելու համար և որն է ջատագովության նպատակը

Այս փուլում, կատարված աշխատանքների արդյունքում ՔՀԿ-ները կարող են հասկանալ, թե արդյոք թիրախային ոլորտներում հաստատված բյուջեն իրականում ծախսվել է (ընդ որում՝ խոսքը չի վերաբերում այլ գործունեության համար բյուջեի վերածրագրավորմանը): Այս արձանագրումները կատարելու համար անհրաժեշտ է ծանոթանալ պետական բյուջեի փաստաթղթերին (օրինակ՝ տարեկան, կիսամյակային, այլ ընթացիկ և ամփոփիչ հաշվետվություններ, Քաղաքացու բյուջե և այլն): ՔՀԿ-ները կարող են վերլուծել բյուջեի ծրագիրը՝ բացահայտելու թերի կատարված ծախսերը, խոչընդոտները և այլ արտահոսքեր, գնահատելու, թե արդյո՞ք բյուջեն արդյունավետ է իրականացվում:

Սա կարող է ծառայել որպես ելակետային տվյալ, ինչի արդյունքում ՔՀԿ-ները կարող են իրականացնել ջատագովություն՝ բյուջեի միջոցները այլ՝ կարիքահեն ոլորտներում ներդնելու նպատակով: Ի դեպ, այս փուլում ՔՀԿ-ները կարող են հանրային մշտադիտարկման ենթարկեն նաև հանրային գնումները և մրցույթները:

Ի՞նչ նվաճում կունենան ՔՀԿ-ները՝ մասնակցության արդյունքում

Բացահայտել հիմնական մարտահրավերներն ու առկա բացերը, որոնք խոչընդոտում են թիրախային ոլորտներում ծառայությունների արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև բարելավել բյուջետային ծախսերի արդյունքները:

Որո՞նք են ՔՀԿ-ներին ներգրավվելու հիմնական խոչընդոտները

- բյուջեների և հանրային գնումների վերլուծություններ իրականացնելու կարողությունների պակասը,
- ֆիսկալ թափանցիկության բացակայությունը,
- համապատասխան տեղեկատվության բացակայությունը:

Փուլ 4. Բյուջեի նկատմամբ վերահսկողություն

Յուրաքանչյուր երկրում իրավասու մարմինը (օրինակ՝ ՀՀ-ում այդ մարմինը Հաշվեքննիչ պալատն է¹⁸, Հնդկաստանում՝ Վերահսկիչ և Գլխավոր աուդիտորը¹⁹, Բնդոնեզիայում՝ Աուդիտի խորհուրդը²⁰, Ղազախստանում Բարձրագույն աուդիտորական պալատը²¹) հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորվող

¹⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքէջը հետևյալ հղմամբ.
<http://armsai.am/>

¹⁹ Տե՛ս Հնդկաստանի Վերահսկիչ և Գլխավոր աուդիտորի պաշտոնական կայքէջը հետևյալ հղմամբ.
<https://cag.gov.in/en>

²⁰ Տե՛ս Բնդոնեզիայի Աուդիտի խորհրդի պաշտոնական կայքէջը հետևյալ հղմամբ.
<https://www.bpk.go.id/en>

²¹ Տե՛ս Ղազախստանի Բարձրագույն աուդիտորական պալատի պաշտոնական կայքէջը հետևյալ հղմամբ.
<https://www.gov.kz/memleket/entities/esep?lang=en>

պետական և տեղական մարմիններում և հիմնարկներում: Որպես կանոն, հաշվեքննություն չի իրականացնում պետական և համայնքային բյուջեների միջոցներից չֆինանսավորվող պետական և տեղական մարմիններում և հիմնարկներում:

Ինչպե՞ս ներգրավվել գործընթացում

Բյուջեի նկատմամբ վերահսկողությունը շարունակական գործընթաց է, որն ընդգրկում է բյուջետային պարբերաշրջանի բոլոր փուլերը: Այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ բյուջետային վերահսկողության աշխատանքի հիմնական մասը կատարվում է բյուջեի պարբերաշրջանի վերջում՝ աուդիտի շրջանակներում կամ ՔՀԿ-ների կողմից իրականացվող այլընտրանքային հասարակական մոնիթորինգի շրջանակներում:

Ի՞նչ տեղեկատվություն է անհրաժեշտ այս փուլում ջատագովություն իրականացնելու համար և որն է ջատագովության նպատակը

Նախորդ փուլերում իրականացված բյուջեի վերլուծություններին պետք է ավելացնել նաև այն հիմնական փաստարկված առաջարկությունները, որոնք նպատակ ունեն բարելավել հատկորոշած խնդիրները, լուծել հատկացումների և ծախսերի ուղղություններում վեր հանված բացերը, ինչպես նաև անդրադառնալ մարդու իրավունքների խախտումներին և որակի խնդիրներին:

Այստեղ ենթափուլի նպատակն է՝ բացահայտել բյուջեի ոչ արդյունավետ օգտագործումը, որակի խնդիրները, մարդու իրավունքների և այլ մարտահրավերների հետ կապված խնդիրները, և հորդորել կառավարությանը փոխել իր գործելակերպը (օրինակ՝ բյուջեի ոչ արդյունավետ օգտագործումը, հնարավոր կոռուպցիոն ռսևորումներին հակազդումն ու դրանց կանխարգելումը) կամ բարելավել հատկացումները՝ հաջորդ տարիներին:

Ի՞նչ նվաճում կունենան ՔՀԿ-ները՝ մասնակցության արդյունքում

ՔՀԿ-ների կողմից վեր հանված խնդիրները կարող են նվազեցվել, հանրությանը մատուցվող ծառայությունները կարող են դառնալ առավել մատչելի և հասանելի, թիրախային ոլորտների ծառայությունների որակը և ծախսերի արդյունավետությունը կարող է էականորեն բարելավվել:

Որո՞նք են ՔՀԿ-ներին ներգրավվելու հիմնական խոչընդոտները

- ֆիսկալ թափանցիկության բացակայությունը,
- համապատասխան տեղեկատվության բացակայությունը,
- բյուջետային վերլուծությունների և շահերի պաշտպանություն իրականացնելու կարողությունների պակասը,
- համախոհների, ռազմավարական գործընկերների և ազդեցության բացակայությունը:

Ամփոփելով սույն բաժինը, պետք է նշել, որ սրանք այն հիմնական չորս փուլերն են, որոնք հարկավոր է բյուջեի փաստահեն շահերի պաշտպանության իրականացման համար: Այս մասում նաև ամփոփ կերպով նշվել են այն հիմնական վերահսկողության գործիքները, որոնք ՔՀԿ-ները կարող են կիրառել բյուջեի ջատագովության նպատակով: Այդուհանդերձ, գործիքների մասին առավել մանրամասն ներկայացված է սույն ուսումնասիրության *«Բյուջետային գործընթացում հանրային վերահսկողություն իրականացնելու հիմնական գործիքները»* մասում:

2. Տեղեկատվության հավաքագրումը

2.1. Տեղեկատվության հավաքագրման իրավական շրջանակը

Առհասարակ, բյուջետային և քաղաքականության գործընթացներում ՔՀԿ-ների կողմից արդյունավետ և փաստահեն շահերի պաշտպանություն իրականացնելու համար առանցքային գործոն է հանդիսանում **թափանցիկությունը՝ տեղեկատվության հասանելիությունը**²²:

Մի շարք երկրներում Սահմանադրության²³ մակարդակով է ամրագրված տեղեկատվության հասանելիության վերաբերյալ դրույթները, որոշ երկրներ ընդունել են առանձին իրավական ակտեր²⁴: Միևնույն ժամանակ, միջոց չէ, որ օրենսդրական կարգավորումների առկայությունը հնարավորություն է տալիս ունենալ տեղեկատվության ամբողջական հասանելիություն: Այս տեսանկյունից, տեղեկատվության հասանելիության ապահովումը, ի թիվս այլնի, ենթադրում է, որ հանրային իշխանությունները տեղեկատվությունը հասանելի դարձնեն ժամանակին՝ չփորձելով դրա հրապարակումը դարձնել ժամանակավրեպ: Ստորև ներկայացված բյուջետային պարբերաշրջանը ցույց է տալիս, օրինակ, թե որոնք կարող են դիտարկվել որպես առանցքային նշանակություն ունեցող բյուջետային փաստաթղթեր, որոնք սովորաբար հանրային իշխանությունները պետք է տրամադրեն բյուջեի պարբերաշրջանի ընթացքում: Նմանօրինակ տեղեկատվությունը անհրաժեշտ է հանրությանը, ներառյալ ՔՀԿ-ներին, որը հնարավորություն կտա մասնակցելու քաղաքականության և բյուջետային հայտերի ու կատարողականի վերաբերյալ քննարկումներին: Բյուջետային այս փաստաթղթերի ժամանակին հասանելիությունը նաև Եվրոպական միության (ԵՄ) բյուջետային աջակցության համատեքստում իրականացվող գնահատականների հիմքում է:


Բյուջետային պարբերաշրջանի հիմնական բյուջետային փաստաթղթերը ներկայացված են ստորև²⁵:

²² Տե՛ս «Քաղաքացիական հասարակության մասնակցության խթանում քաղաքականության և բյուջետային գործընթացներում» ձեռնարկը հետևյալ հղմամբ. <https://europa.eu/capacity4dev/t-and-m-series/documents/reference-document-ndeg-18-promoting-civil-society-participation-policy-and-budget>

²³ Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

²⁴ Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովը 2003 թվականի սեպտեմբերի 23-ին ընդունել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը:

²⁵ Տե՛ս «Քաղաքացիական հասարակության մասնակցության խթանում քաղաքականության և բյուջետային գործընթացներում» ձեռնարկը հետևյալ հղմամբ. <https://europa.eu/capacity4dev/t-and-m-series/documents/reference-document-ndeg-18-promoting-civil-society-participation-policy-and-budget>



Ինչպես վերևում նշվեց, շահերի պաշտպանություն իրականացնելու համար կարևոր է տեղեկատվության հասանելիությունը: Այս համատեքստում, եթե խոսում ենք բյուջեի փաստահեն շահերի պաշտպանության մասին, կարևոր է հասկանալ երկրի բյուջեի օրենսդրությունը, քաղաքականությունը, բյուջեի և ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները և դրանց մշակման կարգավորումները, ինչպես նաև տեղեկատվության ազատության կարգավորումները (օրենսդրություն): Պայմանականորեն, իրավական այս շրջանակը կարելի է դասակարգել երեք խմբի, որոնք ներկայացված են ստորև:

Բյուջեի օրենսդրությունը, քաղաքականությունը և այլ կարգավորումներ

Բյուջեի օրենսդրությունը, քաղաքականությունը	Բյուջեի օրենսդրությունը սահմանում է գործընթացը, ժամանակացույցը, ձևաչափը և ծրագրված բյուջեի պատրաստման համար պատասխանատու կողմերին, ինչպես նաև բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը: Շատ երկրներում բյուջեները հաստատվում են օրենքի տեսքով, ուստի բյուջեի մասին տեղեկատվությունը նույնպես իրավական փաստաթուղթ է: Օրինակ՝ ՀՀ ազգային ժողովը (ԱԺ) յուրաքանչյուր հաջորդ տարվա բյուջեն հաստատում է ընթացիկ տարում՝ ընդունելով կոնկրետ թվականի, օրինակ՝ 2023 թվականի «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը ²⁶ :
Բյուջեի և ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները	Բյուջեի և ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը բյուջետային եկամուտների հավաքագրման պատասխանատու պետական մարմինների, դրանց

²⁶ Տե՛ս օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, ընդունված Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 8-ին:

	<p>ենթակա այլ մարմինների՝ օրենքներով և այլ իրավական ակտերով բյուջեի կատարման ոլորտում վերապահված լիազորությունների պատշաճ կատարման ճշտությունը պարզելուն ուղղված փաստաթուղթ է, որի նպատակն է՝</p> <p>ա) պարզել պետական մարմինների՝ բյուջեի եկամուտների (մուտքերի) ձևավորմանը և ծախսերի իրականացմանն ուղղված գործունեության, մարմիններում հաշվապահական հաշվառման վարման և բյուջեի կատարման մասին հաշվետվությունների կազմման ու ներկայացնելու՝ համապատասխան օրենսդրության պահանջներին համապատասխանությունը.</p> <p>բ) ուսումնասիրել բյուջեի կատարումը, հայտնաբերել այն թերությունները, որոնք ծագել են բյուջեի կատարման ընթացքում:</p>
<p>Տեղեկատվության ազատության կարգավորումները</p>	<p>Տեղեկատվության ազատության կարգավորումները սահմանում են տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները, տեղեկատվության դասակարգումները և այլն: Տեղեկատվության ազատությունը երաշխավորվում է Մահմանադրությամբ, առանձին կամ ընդհանուր օրենսդրությամբ:</p>

2.2. Բաց բյուջեների հասկացությունը և բյուջեների թափանցիկության ապահովմանն ուղղված միջազգային նախաձեռնությունները

Բյուջետային ոլորտում թափանցիկությունը խթանելու նպատակով առկա են տարբեր միջազգային նախաձեռնություններ և գործիքներ: Դրանցից մի քանիսին անդրադարձ է կատարվում ստորև:

Միջազգային բյուջետային գործընկերությունը բաց բյուջեի հետազոտության գործիքի միջոցով իրականացնում է շարունակական գնահատում, թե որքանով են կառավարությունները հանրությանը հասանելի դարձնում բյուջեի մասին տեղեկատվությունը և վերանայում է քաղաքացիական հասարակության մասնակցությունը բյուջետային գործընթացին: Հետազոտությունն օգտագործում է միջազգայնորեն ընդունված չափանիշներ՝ յուրաքանչյուր երկրի բյուջեի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը գնահատելու համար²⁷:

²⁷ Միջազգային բյուջետային գործընկերությունը առաջատար ոչ առևտրային կազմակերպություն է, որը նպաստում է պետական ֆինանսների ավելի պատասխանատու, արդյունավետ և արդար կառավարմանը: Գործընկերությունը համագործակցում է քաղաքացիական հասարակության, համայնքային կազմակերպիչների, կառավարության առաջնորդների և բյուջեի վերլուծաբանների հետ:

Բաց բյուջեի հետազոտությունը երկրներին դասակարգում է ըստ ազգային բյուջետային գործընթացներում նրանց հաշվետվողականության մակարդակի: Այս գնահատումն իրականացվում է 120 երկրներում: Երկրի ազգային բյուջեի թափանցիկության միավորը արտացոլված է Բաց բյուջեների համաթվում, որը երեք համաթվերից բաղկացած մի ամբողջություն է: Դրանք են բյուջեի թափանցիկության, բյուջետային գործընթացներում հանրային մասնակցության և բյուջեի վերահսկողության համաթվերը: Համաթիվը նաև գնահատում է, թե արդյոք հանրությունը ժամանակին է ունեցել հասանելիություն բյուջետային գործընթացին և որքանով է հասանելի դարձած տեղեկատվությունը եղել համապարփակ: Թափանցիկության 61 միավորը (100-ից) կամ ավելի բարձր ցույց է տալիս, որ երկիրը հրապարակում է բավարար տեղեկատվություն, որով աջակցում է հանրության իրազեկվածությանն ու նպաստում հանրային բանավեճերին²⁸: 2021 թվականի Բաց բյուջեների համաթիվը²⁹ նաև չափում է, թե որքանով են կառավարությունը հանրությանն ընդգրկում բյուջետային որոշումների կայացման և մոնիթորինգի գործընթացում, ինչպես նաև գնահատում օրենսդիր մարմնի և հաշվեքննիչ պալատի դերն ու արդյունավետությունը բյուջետային գործընթացում:

Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության (ՊՕՖՀ) ծրագիրը նախաձեռնվել է 2001 թվականին՝ միջազգային զարգացման յոթ գործընկերների կողմից, որոնք են՝ Եվրոպական հանձնաժողովը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկը (ՀԲ) և Ֆրանսիայի, Նորվեգիայի, Շվեյցարիայի և Միացյալ Թագավորության կառավարությունները: 2019 թվականին ծրագրի նոր գործընկերներ են դարձել Սլովակիայի Հանրապետության և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության ֆինանսների նախարարությունները³⁰:

ՊՕՖՀ ծրագիրը ապահովում է պետական ֆինանսների կառավարման (ՊՖԿ) ուժեղ և թույլ կողմերի գնահատման և հաշվետվությունների շրջանակը՝ երկրների կատարողականը չափելու համար օգտագործելով քանակական ցուցանիշներ: ՊՕՖՀ-ն տրամադրում է պետական ֆինանսների կառավարման կատարողականի արդյունքները օգտագործելով մեթոդաբանություն, որը կարող է կրկնվել հաջորդական գնահատումներում՝ ներկայացնելով ժամանակի ընթացքում կատարված փոփոխությունների ամփոփումը: Հայաստանում առաջին ՊՕՖՀ գնահատումն իրականացվել է 2008 թվականին՝ ինքնագնահատման ձևով³¹: Համանման գնահատում, ավելի նեղ շրջանակով՝ պետական ծախսերի կառավարման մասով, ՀՀ-ում ՀԲ-ի աջակցությամբ իրականացվել է դեռևս 2002 թվականին, որի արդյունքները օգտագործվել են բյուջետավորման գործընթացի

Գործընկերության մասին առավել մանրամասն տեղեկատվություն հասանելի է հետևյալ հղմամբ. <https://internationalbudget.org/about-us/>

²⁸ Տե՛ս Միջազգային բյուջետային գործընկերության կողմից մշակված վարկանիշային աղյուսակները հետևյալ հղմամբ. <https://internationalbudget.org/open-budget-survey/rankings>

²⁹ Սիջազգային բյուջետային գործընկերության 2021 թվականի Բաց բյուջեի հետազոտությունը: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://internationalbudget.org/open-budget-survey/open-budget-survey-2021>

³⁰ Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության ծրագրի մասին առավել մանրամասն տեղեկատվություն հասանելի է հետևյալ հղմամբ. <https://www.pefa.org/about>

³¹ Տե՛ս ՀՀ-ի մասով Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության գնահատումը հետևյալ հղմամբ. <https://minfin.am/website/images/files/24f2bb67.pdf>

բարեփոխման ուղղությամբ իրականացված աշխատանքների ժամանակ: Արդյունքում ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի նիստի N 42 արձանագրային որոշմամբ հաստատվել է ՊՖԿ բարեփոխումների առաջին ռազմավարությունը և բարեփոխումների շրջանակում 2010-2014 թվականներին իրականացվելիք միջոցառումների ծրագիրը: ՊԾՖՀ երկրորդ գնահատումը իրականացվել է 2013 թվականին, որը միտված էր ներկայացնելու առաջին գնահատումից ի վեր ՀՀ-ում ՊՖԿ համակարգում տեղի ունեցած զարգացումները և փոփոխությունները: 2014 թվականին ԵՄ-ի կողմից տրամադրված տեխնիկական աջակցության շրջանակում գնահատվել են ՊՖԿ համակարգի բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված 2011-2014թթ. իրականացված միջոցառումները և, հիմք ընդունելով գնահատման արդյունքները, ինչպես նաև Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության (ՊԾՖՀ) 2016 թվականի փետրվարին ՊԾՖՀ քարտուղարության կողմից ընդունված ՊԾՖՀ-2016 նոր շրջանակը, մշակվել և ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրության 15-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշմամբ ընդունվել է ՊՖԿ համակարգի բարեփոխումների վերանայված՝ 2016-2020թթ. ռազմավարությունը (ՊՖԿ համակարգի բարեփոխումների երկրորդ ռազմավարությունը)³²: Երրորդ ռազմավարությունը ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 2019 թվականին նոյեմբերի 28-ին և ընդգրկում է 2019-2023 թվականները: Ռազմավարությամբ սահմանվում են ՊՖԿ համակարգի 2019-2023թթ բարեփոխումների տեսլականը, նպատակները, դրանց իրականացման միջոցառումները և արդյունքները գնահատելու առանցքային ցուցանիշները³³:

Բացի տեղեկատվության տրամադրումից, ՔՀԿ-ների կողմից շահերի պաշտպանություն իրականացնելու համար մյուս **առանցքային գործիքը բաց տվյալներն են, դրանց առցանց հասանելիությունը** այնպիսի ձևաչափով, որը հնարավորություն կտա քաղաքացիներին և ՔՀԿ-ներին կատարել վերլուծություններ և հետազոտություններ՝ վերօգտագործելով բաց տվյալները: Այսպես կոչված բաց տվյալների շարժումը մեծապես ընդլայնվել է այն բանից հետո, երբ 2009 թվականին Միացյալ Թագավորության և Միացյալ Նահանգների կողմից բացվեցին առաջին բաց տվյալների պորտալները: 2011 թվականին **Բաց կառավարման գործընկերությունը** (ԲԿԳ) մեկնարկեց ութ հիմնադիր կառավարությունների կողմից (Բրազիլիա, Ինդոնեզիա, Մեքսիկան, Նորվեգիան, Ֆիլիպինները, Հարավային Աֆրիկան, Միացյալ Թագավորությունը և Միացյալ Նահանգները), որոնք հաստատեցին Բաց կառավարման հոչակազիրը և առաջարկեցին յուրաքանչյուր երկրի համար գործողությունների ծրագրեր: Սեպտեմբերից ԲԿԳ-ն ողջունել է 47 լրացուցիչ կառավարությունների պարտավորությունը՝ միանալ Գործընկերությանը:

ԲԿԳ-ը կամավոր, բազմաշահառու միջազգային նախաձեռնություն է, որի նպատակն է կառավարությունների կողմից ապահովել որոշակի պարտավորություններ իրենց քաղաքացիների նկատմամբ՝ իրենց թափանցիկությունը, բարելավել քաղաքացիական

³² Տե՛ս Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը հետևյալ հղմամբ. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137596>

³³ Տե՛ս ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1716-L որոշումը հետևյալ հղմամբ. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137596>

հասարակությունը, պայքարելով կոռուպցիայի դեմ և օգտագործելով նոր տեխնոլոգիաներ կառավարումն ամրապնդելու համար: ԲԿԳ-ի կենտրոնական առաքելությունն է իրականացնել կառավարության բարեփոխումներն ու նորարարությունները պետական մակարդակով, ինչպես նաև թափանցիկության, հաշվետվողականության և քաղաքացիների ներգրավվածության ոլորտներում երկրներին առաջ մղել իրենց ներկայիս ելակետից:

Դա պահանջում է քաղաքական առաջնորդություն, տեխնիկական գիտելիքներ, կայուն ջանքեր և ներդրումներ: Դա պահանջում է նաև կառավարությունների և քաղաքացիական հասարակության համագործակցություն:

ԲԿԳ անդամ դառնալու համար մասնակից երկրները պետք է ընդունեն բարձր մակարդակի Բաց կառավարման հռչակագիրը³⁴, ներկայացնել երկրի գործողությունների ծրագիր, որը մշակվել է հանրային խորհրդակցության միջոցով, և պարտավորվում են ինքնուրույն զեկուցել իրենց առաջընթացի վերաբերյալ:

Ինչպե՞ս են երկրները միանում ԲԿԳ-ին և ի՞նչ է սպասվում նրանց:

Կառավարությունները պետք է մի քանի քայլ կատարեն ԲԿԳ-ին միանալու համար.

1. Համապատասխանեցնել նվազագույն իրավասության չափանիշներին³⁵ չորս հիմնական ոլորտներում՝ հարկաբյուջետային և բյուջետային թափանցիկություն, տեղեկատվության հասանելիություն, հանրային և ընտրված պաշտոնյաների գույքի բացահայտում և քաղաքացիական ազատությունների/քաղաքացիների ներգրավվածության հիմնական պաշտպանություն:
2. ԲԿԳ-ին մասնակցելու կառավարության մտադրության մասին ազդարարել՝ ԲԿԳ պորտալում տեղադրելու համար ԲԿԳ-ին մասնակցելու պարտավորությունների նամակ և ԲԿԳ-ին մասնակցելու մտադրություն ուղարկելով:
3. Կառավարության ԲԿԳ պարտավորությունների մասին իրազեկելու համար լայն հանրային խորհրդակցություն և ԲԿԳ իրականացման վերաբերյալ կանոնավոր հանրային քննարկումների համար բազմակողմանի ֆորում բացահայտելու համար:
4. Մշակել ԲԿԳ երկրի պլան՝ կոնկրետ պարտավորություններով, որոնք արտացոլում են բաց կառավարման չորս հիմնական սկզբունքները՝ թափանցիկություն, քաղաքացիների մասնակցություն, հաշվետվողականություն և տեխնոլոգիաներ և նորարարություններ. և ներառյալ քաղաքացիների, քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածությունը և գործընկերների հետ խորհրդակցությունը մասնակիցների և Ղեկավար կոմիտեի հետ:
5. Հրապարակայնորեն հաստատել ԲԿԳ սկզբունքների հռչակագիրը և պահպանել երկրի վերջնական գործողությունների ծրագիրը ԲԿԳ պորտալում:
6. ԲԿԳ իրականացումից 12 ամիս հետո հրապարակել առաջընթացի ինքնազննահատման հաշվետվություն և համագործակցել Անկախ հաշվետվության մեխանիզմի հետ՝ սեփական հաշվետվություն կազմելու համար:

³⁴ Տե՛ս Բաց կառավարման հռչակագիրը հետևյալ հղմամբ.

<https://www.opengovpartnership.org/process/joining-ogp/open-government-declaration/>

³⁵ Տե՛ս ԲԿԳ-ի Նվազագույն իրավասության չափանիշները հետևյալ հղմամբ.

<https://www.opengovpartnership.org/process/joining-ogp/eligibility-criteria/>

7. Նպաստել այլ երկրներում բաց կառավարման առաջխաղացմանը՝ ըստ անհրաժեշտության կիսելով լավագույն փորձը, տեխնիկական աջակցությունը, տեխնոլոգիաները և ռեսուրսները:

ՀՀ կառավարությունը միացել է ԲԿԳ նախաձեռնությանը 2011 թվականին և անդամակցությունից ի վեր իրականացրել է չորս ազգային գործողությունների ծրագրեր: Գործողությունների ծրագրերը միտված էին բարելավելու կառավարության կողմից ստանձնած բարեփոխումների օրակարգը՝ դարձնելով դրանք ավելի թափանցիկ, հաշվետու, մասնակցային և նորարար³⁶:

Հաջորդ առանցքային գործիքը տեղեկատվությունը տրամադրման եղանակներն են, որոնք պետք է լինեն հանրամատչելի: Որոշ երկրներ այս համատեքստում հրապարակել են, այսպես կոչված, քաղաքացու բյուջե կամ բյուջեի ամփոփագրեր: Այս փաստաթղթերը ամփոփում և բացատրում են բյուջեի հիմնական տեղեկատվությունը մատչելի ձևաչափով՝ պարզ և հասկանալի լեզվով: Իդեալում, դրանք պետք է հասանելի լինեն երկրում սովորաբար օգտագործվող բոլոր լեզուներով: Քաղաքացու բյուջեն այս կերպ կարող է կարևոր գործիք հանդիսանալ քաղաքացիական հասարակության ընդլայնված մասնակցության համար: Միջազգային բյուջետային գործընկերությունը իշխանությունների համար հրապարակել է ուղեցույց, որը քայլ առ քայլ ցույց է տալիս քաղաքացու բյուջե մշակելու կարգն ու եղանակը՝ ռազմավարության մշակումից մինչև դրա տարածում և գնահատում³⁷:

Ըստ էության, քաղաքացու բյուջեն նախատեսված է հանրային ֆինանսների վերաբերյալ կարևորագույն տեղեկատվությունը ներկայացնել լայն լսարանին, քաղաքացիներին: Ինչպես արդեն նշվեց, դրանք սովորաբար գրված են մատչելի լեզվով և ներառում են տեսողական տարրեր, որոնք օգնում են ոչ մասնագետ ընթերցողին հասկանալ ողջ տեղեկատվությունը: Չնայած քաղաքացու բյուջեն պետական բյուջեի մատչելի տարբերակով ներկայացվող տեսակն է, այդուհանդերձ այն պետք է պարունակի պետական բյուջեի ամբողջական տարբերակում պարունակող ինֆորմացիան և հասկանալի լինի համապատասխան կրթություն չունեցող քաղաքացիների համար: Քաղաքացու բյուջեն կարող է կազմվել ՔՀԿ-ների կամ այլ՝ շահերի պաշտպանությամբ զբաղվող խմբերի կողմից: Սակայն այն պետք է մշակվի և հաստատվի կառավարության կողմից, քանի որ այն ուղղորդում է, որ կառավարության կողմից ներկայացվող տարեկան բյուջեի ծախսերը և քաղաքականությունները, որոնք պետք է լրիվ հասկանալի լինեն հանրության համար:

³⁶ ԲԿԳ-Հայաստան նախաձեռնության կայքէջը հետևյալ հղմամբ. <https://ogp.gov.am/hy/>

³⁷ Տե՛ս Միջազգային բյուջետային գործընկերության կողմից մշակված «Քաղաքացիների բյուջեները մշակելու համար ուղեցույց կառավարության համար» ուղեցույցը հետևյալ հղմամբ. <https://internationalbudget.org/wp-content/uploads/Citizen-Budget-Guide.pdf>

3. Բյուջեի նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու ՔՀԿ-ների հմտությունները ու գործիքները

Արդյունավետ շահերի պաշտպանություն իրականացնելու համար կարևոր է ունենալ համապատասխան հմտություններ և տիրապետել այն գործիքակազմին, որի ճիշտ կիրառումը կհասցնի ցանկալի արդյունքին: Այդուհանդերձ, պրակտիկան ցույց է տալիս, որ ՔՀԿ-ները ոչ միշտ է, որ ամբողջությամբ պատկերացնում են անհրաժեշտ հմտությունների բովանդակությունը և գործիքները: Իրականում, պետք է նաև նշել, որ ստորև ներկայացվող շահերի պաշտպանության իրականացման գործիքները սպառիչ չեն, այդ ցանկը լրացվում է մեր հասարակության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ, հետևապես ներկայացված գործիքները այն հիմնական միջոցներն են, որ շահերի պաշտպանություն իրականացնող ՔՀԿ-ներին օգնում է շարժվել դեպի իրենց նպատակ:

3.1. Բյուջետային գործընթացում հանրային վերահսկողություն իրականացնելու հիմնական հմտությունները

Նախքան բյուջեի ուղղությամբ աշխատանքներ սկսելը, կարևոր է հասկանալ, թե ինչպիսին են թիրախային ոլորտի համատեքստը: Առավել պատկերավոր դարձնելու նպատակով, որպես թիրախային ոլորտի օրինակ դիտարկենք կրթությունը: Այս պարագայում անհրաժեշտ է հասկանալ ինչպես է աշխատում ազգային կրթական համակարգը և ովքեր են հիմնական դերակատարներն ու որոշում կայացնողները: Ավելին, կարևոր է հասկանալ այն իրավական շրջանակը, որով նախատեսված է ՔՀԿ-ների բյուջետային գործընթացին մասնակցելու և բյուջետային տեղեկատվության հասանելիություն ունենալու իրավունքը³⁸:

➤ **Հասկանալ կրթության քաղաքականության (policy) միջավայրը**

Շատ երկրներում կրթությունը ճանաչվում է սոցիալական և տնտեսական զարգացման հիմնական առաջնահերթություն, որն էլ հանգեցրել է կրթական համակարգում ներդրումների ավելացմանը: Ըստ այդմ, գաղտնիք չէ, որ քաղաքական միջավայրը ձևավորում է կառավարության առաջնահերթությունները, որոնք ազդում են կրթության ոլորտում ռեսուրսների բաշխման վրա: Մյուս հակառակ, քաղաքական մտահոգությունները ազդում են ազգային կրթական քաղաքականության և ազգային կրթական համակարգի կառուցվածքի վրա, որոնք, իրենց հերթին, որոշում են, թե ինչպես են ռեսուրսները բաշխվում կրթական հաստատությունների միջև: Ռեսուրսների բաշխումն ուղղակիորեն ազդում է կրթության որակի վրա: Հետևապես, ՔՀԿ-ների կողմից նախքան բյուջետային գործընթացում, հարկավոր է ուսումնասիրել և ծանոթանալ կառավարության առաջնահերթություններին և հիմնական մտահոգություններին, որ նրանք արտահայտել են իրենց գործունեության տարբեր փաստաթղթերում: Այդպիսի փաստաթղթերից կարող են լինել Կառավարության գործունեության ծրագրերը, ոլորտային ռազմավարությունները:

³⁸ Տե՛ս Կրթության ոլորտում աշխատող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար բյուջետային գործընթացի ուղեցույցը: Հասանելի է հետևյալ հղմամբ.

<https://docs.campaignforeducation.org/csef/CEF%20Budget%20Guide%20for%20CSOs.pdf>

Օրինակ՝ 2022 թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին ՀՀ օրենքը, որի առաջին մեզանպատակն է՝ «գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների համատարած, ներատական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենալ քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, որի համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների կատարումը, որն առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատուն»³⁹:

➤ Ուսումնասիրել իրավական շրջանակը

Ինչպես արդեն նշվել է, նախքան բյուջեի շահերի պաշտպանության գործընթացը սկսելը, անհրաժեշտ է համոզվել, որ շահերի պաշտպանության իրականացման նպատակը իրավական տեսանկյունից իրագործելի է և առկա չեն օրենսդրական խոչընդոտներ: Իրավական շրջանակը ներառում է ազգային իրավական ակտերը (սահմանադրություն, պետական բյուջեի մասին օրենք, այլ օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր՝ որոշում, հրամաններ, կարգադրություններ), ազգային հանրային քաղաքականությունները (ոլորտային ռազմավարական ծրագրերը, հայեցակարգերը) և միջազգային փաստաթղթերը (կոնվենցիաները, համաձայնագրեր, պայմանագրեր, օրինակ՝ ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոնվենցիան մասնակից պետությունների համար սահմանում է պարտավորություն՝ ապահովել երեխաների պարտադիր և անվճար տարրական կրթություն):

Նախքան բյուջետային գործընթացներին մասնակցելը, ՔՀԿ-ներին խորհուրդ է տրվում ծանոթանալ թիրախային ոլորտի առանցքային գործոններին: Օրինակ՝ կրթության ոլորտի դեպքում, հարկավոր է նախապես ուսումնասիրել՝

- **Կրթության իրավունքը** - մի շարք երկրներում կրթության իրավունքը ամրագրված է սահմանադրությամբ, առանձին օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով⁴⁰:
- **Կրթության ոլորտի հիմնական դերակատարների իրավասությունները և գործառույթները** - իրավասությունների և գործառույթների շրջանակը պետք է հասկանալ յուրաքանչյուր դերակատարի մասով, օրինակ՝ Կրթության և գիտության նախարարություն, հանրակրթական դպրոցներ, նախադպրոցական և ուսումնական հաստատություններ, Բարձրագույն որակավորման կոմիտե, Կրթության ազգային ինստիտուտ, մարզպետարաններ և ՏԻՄ-եր, և այլն:
- **Հանրային մասնակցությունը** - հարկավոր է հստակ պատկերացնել թե քաղաքացիները և ՔՀԿ-ները ինչպես կարող են մասնակցել բյուջետային գործընթացին և ինչ ներդրում ու ազդեցություն կարող են ունենալ վերջիններս թիրախային ոլորտում:

³⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին ՀՀ օրենքը, ընդունված՝ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի կողմից 2022 թվականի նոյեմբերի 16-ին հետևյալ հղմամբ.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=171800>

⁴⁰ Օրինակ՝ կրթության իրավունքը Հայաստանի Հանրապետությունում նախատեսված է ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով, ընդունված՝ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի կողմից 2009 թվականի հուլիսի 10-ին: Կրթության ոլորտի օրենսդրությունը հասանելի է հետևյալ հղմամբ.

<https://escs.am/am/category/ra-laws>

➤ **Կառուցողական համագործակցել բյուջետային գործընթացում կրթության ոլորտի հիմնական դերակատարների հետ**

Տարբեր երկրներում կրթության ոլորտի դերակատարների շրջանակը տարբեր է լինում: Մրա հետ մեկտեղ հիմնական դերակատարները, որպես կանոն, նույնն են և նրանց կարելի է դասակարգել երկու խմբերի.

Որոշում կայացնողներ	Որոշումների կայացման գործընթացի աջակիցներ
Կառավարությունը՝ ի դեմս Կրթության և գիտության նախարարության	Կրթական հաստատությունները, ներառյալ՝ նախադպրոցական, հանրակրթական, բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները
Խորհրդարանը՝ ի դեմս կրթության և գիտության հարցերի հանձնաժողովը	Միջազգային կազմակերպություններ և նախաձեռնություններ, օրինակ՝ <ul style="list-style-type: none"> - Միջազգային բյուջետային գործընկերությունը, - Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության ծրագիրը, Բաց կառավարման գործընկերությունը
Այլ իրավասու պետական մարմինների ներքին իրավական ակտերը, օրինակ՝ աստիճանաշնորհում իրականացնող հանձնաժողովները (ՀՀ-ի դեպքում՝ Բարձրագույն որակավորման կոմիտե)	մասնագիտացված ՔՀԿ-ներ անհատ փորձագետներ զանգվածային լրատվամիջոցներ

Հետևապես, արդյունավետ շահերի պաշտպանություն իրականացնելու համար, հարկավոր է կառուցողական համագործակցություն սկսել որոշում կայացնող և այդ գործընթացում աջակցող սուբյեկտների հետ:

➤ **Մշակել ռազմավարական պլան և սահմանել բյուջետային գործընթացներին մասնակցությունը որպես առաջին ռազմավարական նպատակ**

Ռազմավարական պլանը համարվում է ՔՀԿ-ների գործունեության ուղենիշային փաստաթուղթը՝ հիմնական քաղաքականությունը: Ռազմավարական պլանի նպատակը ՔՀԿ-ների առաջիկա մի քանի տարիների (սովորաբար 3-5 տարի) գործունեության ուղղությունների առաջնահերթությունների որոշումն է, դրանից բխող նպատակների (սովորաբար 2-4 նպատակ) սահմանումն ու դրանք նվաճելու պլանավորումը՝ ներառյալ խնդիրները, գործողություններն ու ակնկալվող արդյունքները՝ իրենց շահառուներին և շահակիցներին ներկայացնելու համար: Ռազմավարական պլանը ՔՀԿ-ներին թույլ է տալիս հստակ կերպով պատկերացնել ապագայի տեսլականն ու առաքելությունը, կրել արժեքներ և չշեղվել ռազմավարական ուղղուց և դրանց

համապատասխան մշակել ներքին քաղաքականություններ, այդ թվում նաև՝ շահերի պաշտպանության պլան:

Բյուջետային գործընթացներին մասնակցությունը և այս ոլորտում փաստահեն շահերի պաշտպանությունը կարող է հանդիսանալ առանձին ռազմավարական նպատակ, որի ուղղությամբ ՔՀԿ-ն համախմբում է իր ջանքերը և անհրաժեշտ ռեսուրսները՝ համապատասխան արդյունքը նվաճելու նպատակով:

➤ **Ներդնել և կիրարկել ինքնագնահատման գործիքը**

Շահերի պաշտպանության իրականացման գործընթացում կարևոր է, որ ՔՀԿ-ները խորապես հասկանան, թե որոնք են իրենց խոցելի, և հետևապես՝ լրացուցիչ ուշադրության արժանի ենթահամակարգերը: Այս հարցում միջազգային պրակտիկայում ընդունված գործիքներից է ինքնագնահատումը: Այն իրենից ներկայացնում է գործիքակազմ, որոնց կիրառման և համադրման արդյունքում կազմակերպվում է ՔՀԿ-ների ինքնագնահատումը, հատկորոշվում է վերջիններիս առավել խոցելի ենթահամակարգերը, դրանց ուժեղացնելու նպատակով մշակվում է ՔՀԿ-ների տարեկան զարգացման պլան, որտեղ նախատեսվում են յուրաքանչյուր ենթահամակարգի առողջացման միջոցառումները (գործողությունները): Օրինակ՝ վեր հանված թույլ ենթահամակարգերից կարող է լինել ծրագրերը և ծառայությունները, ֆինանսական միջոցների կառավարումը, որոնք պետք է հստակ գործողություններով ուժեղացվեն և նպաստեն ռազմավարական նպատակների իրականացմանը:

➤ **Մշակել ֆինանսական կայունության և հայթայթման պլան**

Ֆինանսական կայունության և հայթայթման պլանը հանդիսանում է կազմակերպության ֆինանսական կայունության գործողությունների ուղենիշն ու աշխատանքային պլանը: Պլանը մշակվում է մեկ տարվա կտրվածքով, դրանում ներառվում են այնպիսի տեղեկություններ, որոնք վերաբերում են ՔՀԿ-ի ներկա ֆինանսական վիճակին, ունեցած պարտավորություններին և ռազմավարական նպատակների համար սահմանված ռեսուրսների հայթայթման պլանը: Եթե այդ տարվա ընթացքում ՔՀԿ-ն ունի անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ, ապա պլանում ուրվագծվում են ֆինանսական կայունությունն ապահովելու հիմնական քայլերն ու ուղղությունները: Այս փաստաթուղթն է, որ ապահովում է ՔՀԿ-ի առաքելության ու նպատակների իրականացումը, գործունեության անընդհատությունը և կայուն զարգացում, ֆինանսական աղբյուրների բազմազանությունը, շուկայում ունեցած առանձնահատուկ դերի ամրագրումն ու ինքնաֆինանսավորման մեխանիզմները:

➤ **Ավելացնել համախոհների թիվը և վարել արդյունավետ հաղորդակցություն**

Խոսելով բյուջետային գործընթացում ՔՀԿ-ների հմտությունների մասին, ոչ պակաս կարևոր նշանակություն ունի գաղափարի կամ փաստարկված առաջարկի հարցում համախոհների թիվը: Այս առումով, ջատագովությունը պահանջում է նաև արդյունավետ հաղորդակցություն, թիրախային լսարանի հատկորոշում, լսարանի համար մատչելի և հասկանալի լեզվի ընտրություն (հնարավորինս խուսափելով մասնագիտական եզրույթներից), ինչպես նաև համառոտ և իմաստալից նյութեր:

Այսպես օրինակ՝

- 1 էջի սահմանում մատչելի և պարզ լեզվով ձևակերպված փաստարկված առաջարկները հեշտությամբ կգրավեն շահառուների ուշադրությունը և հետաքրքրվածությունը,
- 3 էջի սահմանում գրված քաղաքականության համառոտագիրը (policy brief) կհետաքրքրի որոշում կայացնող պաշտոնյաներին,
- 15-20 էջի սահմանում շարադրված փաստարկված զեկույցը, որտեղ ներառված կլինեն նաև ուսումնասիրության հիմնական արդյունքները, այդ թվում՝ ներառյալ՝ կառավարության կամ ՏԻՄ-ի բացթողումները, վերհանված խնդիրների վերլուծությունը, չկատարված կամ թերի կատարված միջազգային հանձնառություններն ու առաջարկությունները, կհետաքրքրի կառավարությանը, միջազգային կազմակերպություններին, ոլորտային փորձագետներին և մասնագիտացված այլ ՔՀԿ-ներին,
- 1 էջի սահմանում մատչելի և պարզ լեզվով մշակված մամլո հաղորդագրությունը կհետաքրքրի զանգվածային լրատվամիջոցներին, որոնք ունենալով հանրային մեծ լսարան կտարածեն իրենց լրատվական միջոցներով և կգրավեն առավել լայն հանրության ուշադրությունը:

3.2. Բյուջետային գործընթացում հանրային վերահսկողություն իրականացնելու հիմնական գործիքները

Այս բաժնում ներկայացվում են այն հիմնական գործիքները, որոնք օգտագործում են ՔՀԿ-ները՝ վեր հանելու կառավարման պրակտիկայի խնդիրները, պետական ծախսերի վատնումն ու արտահոսքը:

➤ Մասնակցային բյուջետավորում (ՄԲ)

ՄԲ-ը հանրային քննարկման և որոշումների կայացման գործընթաց է, որը օգնում է մարդկանց որոշել, ինչպես օգտագործել համայնքային կամ պետական բյուջեի մի մասը: Այն մասնակցային ժողովրդավարության մի գործիք է, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս համագործակցել տեղական կամ պետական կառավարման մարմինների հետ, մասնակցել հանրային ռեսուրսների բաշխման և բյուջետային գործընթացներում կայացվող որոշումներին, որոնք անմիջական ազդեցություն ունեն իրենց կյանքի որակի վրա⁴¹:

ՄԲ առաջին գործընթացները սկսվել են 1980-ականներին Բրազիլիայում, որտեղ մի քանի փորձարկումներից հետո, մեթոդը իր առաջին լիարժեք և արդյունավետ կիրառումը գտավ 1989թ. Պորտո Ալեգրե քաղաքում, որը Ռիո Գրանդե դե Սուլ նահանգի մայրաքաղաքն էր՝ շուրջ 1.2 միլիոն բնակչությամբ: Պորտո Ալեգրեի հաջողությունը «վարակիչ» դարձավ ոչ միայն Բրազիլիայի քաղաքների, այլ նաև մյուս երկրների համար և ներկայումս հաջողությամբ կիրառվում է ԱՄՆ, Եվրոպայի, Աֆրիկայի և այլ երկրների մեծ ու փոքր քաղաքներում⁴²:

⁴¹ Տե՛ս Մասնակցային բյուջետավորման մասին առավել մանրամասն հետևյալ հղմամբ.

<https://www.participatorybudgeting.org/what-is-pb/>

⁴² Տե՛ս <https://www.washingtonpost.com/news/monkey-cage/wp/2014/01/22/brazil-let-its-citizens-make-decisions-about-city-budgets-heres-what-happened/?noredirect=on>

ՄԲ-ը ուղղված է խթանելու հանրության ներգրավվածությունը ինչպես համայնքային ռեսուրսների կառավարման մեջ, այնպես էլ թիրախային ոլորտում կամ թիրախային գերատեսչության գործունեության մեջ՝ օգնելու նրանց ազդեցություն ունենալ բյուջետային քաղաքականության վրա⁴³: Թեև այս գործիքը ընդունված է կիրառել համայնքային մակարդակում, այդուհանդերձ այն կարող է կիրառել նաև պետական (հանրային) ծախսերի կառավարման մեջ, որի ընթացքում ՔՀԿ-ները կարող են՝

- մուտք գործել, վերլուծել և տարածել բյուջեի մասին տեղեկատվություն,
- իրականացնել հետազոտություն՝ բնակչության կարիքներն ու առաջնահերթությունները գնահատելու համար,
- միավորել քաղաքացիներին և վերապատրաստել նրանց բյուջետային հարցերին առնչվող թեմաներով,
- նպաստել քաղաքացիների և հանրային իշխանությունների միջև հաղորդակցությունն ու հարաբերությունները

Այս գործիքը հնարավորություններ է ստեղծում կրթել և ուսուցանել քաղաքացիներին, ինչպես նաև ուժեղացնել քաղաքացի-կառավարություն հարաբերությունները: ՄԲ-ն օգնում է խթանել կառավարության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ինչպես նաև պետական ծրագրերի և ծառայությունների արդյունավետությունը:

ՄԲ-ն իրականացվում է չորս փուլով⁴⁴:

Առաջինը՝ նախապատրաստական փուլն է, որտեղ որոշվում է, թե որ տարածքային միավորում է իրականացվելու է ՄԲ-ն, օրինակ՝ բնակավայրերը, համայնքը կամ միջհամայնքային միավորումը՝ գործընթացում ներգրավելով համապատասխան վայրի բնակիչներին: Եթե ՄԲ-ն իրականացվում է տեղական մակարդակում, ապա այս փուլում համայնքի ավագանու որոշմամբ սահմանվում է համայնքի ֆինանսական միջոցների այն չափաբաժինը, որը նախատեսվում է ուղղել ՄԲ գործընթացի արդյունքում մշակված ծրագրերի և նախաձեռնությունների իրականացմանը:

Երկրորդը՝ տեղեկատվական հանդիպումների փուլն է, որի շրջանակներում ՄԲ իրականացնողը կազմակերպում է տեղեկատվական հանդիպումներ ՄԲ գործընթացում ընդգրկված տարածքային միավորների բնակիչների հետ՝ ներկայացնելու ՄԲ նպատակները, գործընթացը, ժամանակացույցը, և ակնկալվող արդյունքները:

Երրորդը՝ խնդիրների վերհանման և ձևակերպման փուլն է, որը համարվում է այս գործընթացի առանցքային և մասնակցային փուլը և իրականացվում է հանրային հանդիպումների և քննարկումների միջոցով: Այս փուլում մասնակիցները վեր են հանում հիմնական խնդիրները և ձևակերպում դրանք՝ որպես ծրագրային առաջարկ՝ նախապես հաստատված ձևաչափի համաձայն:

Չորրորդը՝ ծրագրի ընտրության փուլն է, որի շրջանակներում մասնակիցների ընտրությանն է ներկայացվում նախորդ երեք փուլերի արդյունքում մշակված ծրագրերը: Մասնակիցների (համայնքի բնակիչների) կողմից առավելագույն հավանության արժանացած ծրագիրը ընտրելու նպատակով, քվեարկության են դրվում բոլոր մշակված ծրագրերը և

⁴³ Տե՛ս «Քաղաքացիական հասարակության կողմից բյուջետային գործընթացի մոնիթորինգ» ուղեցույցը: Հասանելի է հետևյալ հղմամբ.

https://knowledgehub.transparency.org/assets/uploads/helpdesk/CSO_budget_monitoring_2016.pdf

⁴⁴ Տե՛ս «Մասնակցային բյուջետավորման ուղեցույցը»: Հասանելի է հետևյալ հղմամբ

<https://internationalbudget.org/wp-content/uploads/A-Guide-to-Participatory-Budgets.pdf>

քվեարկության արդյունքներով առավելագույն ձայն հավաքած ծրագիրը ներկայացվում է ֆինանսավորման⁴⁵:

➤ Այլընտրանքային բյուջեներ

Այլընտրանքային բյուջեների նախաձեռնությունները շահերի պաշտպանության ռազմավարություն է, որի միջոցով ընդգծվում են պետական բյուջեների սահմանափակումները՝ կապված հասարակական կյանքի հիմնական ոլորտների կամ խնդիրների հետ: Այս գործիքի միջոցով ցույց է տրվում, որ պետական բյուջեն չի ծառայում կոնկրետ խմբերի (ինչպիսիք են օրինակ՝ կանայք, երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք և գործազուրկները) կարիքները հոգալուն կամ ոլորտային մարտահրավերները լուծելուն (օրինակ՝ շրջակա միջավայրի պահպանումը, սոցիալական ապահովությունը, մշակութային ժառանգության պահպանումը): Այս խնդիրների փունջը բացահայտելուց հետո ներկայացվում է դրանց վերաբերող նոր բյուջետային առաջարկ⁴⁶:

Որպես կանոն, ՔՀԿ-ները օգտագործում են այլընտրանքային բյուջեները հետևյալ նպատակներով.

- բացահայտել կառավարության իրական բյուջեի հիմքում ընկած առաջնահերթությունները և սուբյեկտիվ գործոնները,
- բարձրացնել որոշակի խմբերի ուղղությամբ կամ հանրային հետաքրքրության հարցերի շուրջ կառավարության կողմից ընդունված բյուջեի դրական և բացասական ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկվածությունը,
- «ստիպել» կառավարությանը՝ ներկայացնել պետական բյուջեով նախատեսված հատկացումների հիմնավորումները և դրանց փոխկապակցվածությունը կառավարության քաղաքականության առաջնահերթությունների հետ⁴⁷:

Բյուջետային գործընթացում քաղաքացիական մասնակցության մյուս գործիքների հետ համեմատ, այլընտրանքային բյուջեն հանդիսանում է ամենաբարդերից մեկը, քանի դրանով մշակվում և ներկայացվում են այլընտրանքային ծախսեր, հարկային և դրամավարկային քաղաքականություն: Այս գործիքը մշակելիս պետք է հաշվի առնել նաև ֆինանսավորման և բյուջետավորման գլոբալ, ազգային և տեղական մակարդակների միջև կապերը: Այսպիսով, այս վարժությունը հանդիսանում է մինչ օրս կիրառվածներից ամենաամբողջական նախաձեռնությունը: Ընդ որում, այն կարող է լինել նաև ամենաազդեցիկներից մեկը: Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ սա պահանջում է տեխնիկական հմտությունների բարձր մակարդակ, պետական բյուջեի խորը գիտելիքներ, հետազոտական կարողություններ, շահերի պաշտպանություն իրականացնելու հմտություններ:

Ներկայում այլընտրանքային բյուջեներ մշակելու լավագույն փորձերից է հանդիսանում Կանադական քաղաքականության այլընտրանքների կենտրոնի կողմից մշակված Կանադայի այլընտրանքային ֆեդերալ բյուջեները⁴⁸ և Միացյալ Թագավորության Հարկաբյուջետային

⁴⁵ Տե՛ս նույն տեղում:

⁴⁶ Տե՛ս Այլընտրանքային բյուջեների մասին հետևյալ հղմամբ.

https://www.civicus.org/documents/toolkits/PGX_G_Alternative%20Budgets.pdf

⁴⁷ Տե՛ս նույն տեղում:

⁴⁸ Կանադական քաղաքականության այլընտրանքների կենտրոնի կողմից մշակված Կանադայի այլընտրանքային ֆեդերալ բյուջեները հետևյալ հղմամբ.

<https://policyalternatives.ca/publications/reports/alternative-federal-budget-2022>

հետազոտությունների ինստիտուտի կողմից ներկայացված այլընտրանքային հարկային առաջարկները⁴⁹:

➤ **Սոցիալական աուդիտներ**

Ինչպես ֆինանսական աուդիտն է ստուգում, թե ինչպես են գումարները ծախսվում կամ ծախսվել, այնպես էլ սոցիալական աուդիտը ստուգում է, թե ինչպես են ծրագրերն ու ծառայություններն իրականացվել կամ իրականացվում՝ նպատակ ունենալով դրանք դարձնել ավելի լավը, որոնց արտացոլում են սոցիալական, բնապահպանական և համայնքային նպատակները: Սոցիալական աուդիտը նպատակ ունի բարելավել ծրագիրը կամ հանրային ծառայությունները՝ կատարելով հանրային արձանագրումների և օգտատերերի հետադարձ կապի համակարգված գնահատում:

Այն նախատեսված է օժանդակել օգտատերերին հասկանալ և գնահատել ծրագրի կամ հանրային ծառայության ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու ձախողումները: Սոցիալական աուդիտը համայնքային մասնակցությունը մեծացնելու, կառավարության և/կամ ծառայություններ մատուցող սուբյեկտների միջև կապերի ամրապնդման, թափանցիկության և հանրային հաշվետվողականության խթանման և գործընթացում ներգրավված բոլոր մասնակիցների մեջ պատասխանատվության զգացում սերմանելու միջոց է:

Սոցիալական աուդիտի իրականացման գործընթացում առկա են մի շարք արտաքին և ներքին գործոններ⁵⁰:

Արտաքին գործոններից են՝

1. քաղաքական ազատությունը և ՔՀԿ-ների հետ համագործակցող կառավարությունը,
2. տեղեկատվության հասանելիությունը և այս մասով համապատասխան իրավական կարգավորումները,
3. գործընթացում ներգրավված ՁԼՄ-ները,

Ներքին գործոններից են՝

1. կարողություն ունեցող մարդկային ռեսուրսները, որոնք տիրապետում են հետևյալ հիմնական հմտություններին.
 - a. *հետազոտություններ իրականացնելու հմտություններ,*
 - b. *մոբիլիզացիա իրականացնելու հմտություններ,*
 - c. *դասընթացներ կազմակերպելու և անցկացնելու հմտություններ,*
 - d. *շահերի պաշտպանություն իրականացնելու հմտություններ,*
2. փորձառու առաջնորդներ,
3. տեղական և պետական մարմինների հետ կայուն և կառուցողական համագործակցության փորձ,
4. գործարար համբավ և ոլորտում մասնագիտական ու փորձագիտական փորձառություն⁵¹:

⁴⁹ Միացյալ Թագավորության Հարկաբյուջետային հետազոտությունների ինստիտուտի գործունեությանը և նրանց կողմից ներկայացված այլընտրանքային հարկային առաջարկներին կարող էք ծանոթանալ հետևյալ հղմամբ. <https://ifs.org.uk/>

⁵⁰ Տե՛ս «Սոցիալական աուդիտը որպես բյուջեի մոնիթորինգի իրականացման գործիք» զեկույցը: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://internationalbudget.org/wp-content/uploads/Social-Audits-as-a-Budget-Monitoring-Tool.pdf>


⁵¹ Տե՛ս նույն տեղում:

4. Բյուջետային գործընթացը և շահերի պաշտպանության փորձը Հայաստանի Հանրապետությունում

4.1. Պետական բյուջեի մշակման և ընդունման պարբերաշրջանը ՀՀ-ում

Պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքները կազմակերպում է կառավարությունը՝ առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշման⁵² հիման վրա՝ այդ որոշմամբ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով⁵³ նախատեսված ժամկետներում, իսկ ՀՀ ԱԺ-ը ընդունում է առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքը⁵⁴՝ «ՀՀ ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով⁵⁵ սահմանված կարգով:

Պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացը բաղկացած է առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի մշակման համար պատշաճ ծրագրային հիմքեր ստեղծելու նպատակով առաջիկա երեք տարվա՝ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) և առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի մշակումներից:



⁵² Յուրաքանչյուր հաջորդ տարվա բյուջետային գործընթացները կազմակերպելու նպատակով ՀՀ վարչապետը ընթացիկ տարում ընդունում է համապատասխան որոշումը: Տե՛ս օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» ՀՀ վարչապետի 2023 թվականի հունվարի 26-ի թիվ 86-Ա որոշումը հետևյալ հղմամբ.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=173600>

⁵³ Տե՛ս «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը հետևյալ հղմամբ.

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=75497>

⁵⁴ Տե՛ս օրինակ՝ «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը հետևյալ հղմամբ.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176824>

⁵⁵ Տե՛ս «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը հետևյալ հղմամբ.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175794>

ՄԺԾԾ հայտերի և տարեկան բյուջեի նախագծի մշակում և քննարկում ՔՀԿ-ների հետ

Առաջիկա երեք տարվա՝ ՀՀ պետական ՄԺԾԾ-ի մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել կառավարության համար կառավարելու պետական հատվածի ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան: ՄԺԾԾ-ն ծառայում է հիմք՝ պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար:

ՖՆ-ը առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում պետական մարմիններ է ուղարկում առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելու և դրանք ներկայացնելու մեթոդական ցուցումները, ինչպես նաև պետական կառավարման տարածքային մարմինների միջոցով ՏԻՄ-երին է տրամադրում վերջիններիս համար պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումներ:

Այս գործընթացին հաջորդում է ոլորտային քաղաքականության հարցերի շուրջ ՀՀ վարչապետի աշխատակազմի, ՀՀ ՖՆ-ի և հայտատու մարմինների մասնակցությամբ քննարկումների անցկացումը և առաջարկությունների ներկայացումը: Այնուհետև, հայտատու մարմինները ՀՀ ՖՆ են ներկայացնում իրենց ՄԺԾԾ (ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի) հայտերը, որոնք այլ պարզաբանող նյութերի հետ միասին հրապարակվում են հայտատու մարմինների ինտերնետային կայքերում:

ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված կարգով ՄԺԾԾ նախագծի (ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի) մշակման աշխատանքների շրջանակներում տեղի է ունենում բյուջետային հայտերի շուրջ քննարկումների շահագրգիռ ՔՀԿ-ների հետ: Քննարկումների արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ներառյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ ամփոփաթեթերը, հրապարակվում է հայտատու մարմինների ինտերնետային կայքերում:

ՄԺԾԾ նախագծի վերջնական և տարեկան բյուջեի նախագծի նախնական տարբերակների հաստատում

Բյուջետային հայտերի քննարկումներից հետո ՀՀ ՖՆ-ը կազմում և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացնում ՄԺԾԾ նախագծի(ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծի նախնական տարբերակը) վերջնական տարբերակը, որից հետո ՀՀ կառավարությունը քննարկում և հաստատում է ՄԺԾԾ նախագիծը: Հաստատված ՄԺԾԾ-ը (ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծի նախնական տարբերակը) ներկայացվում է ՀՀ ԱԺ՝ իբրև ի գիտություն:

ՀՀ կառավարության կողմից հաստատված առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծի նախնական տարբերակում ներկայացված բյուջետային ծրագրերի շուրջ ՀՀ ԱԺ գլխադասային հանձնաժողովներում կազմակերպվում են քննարկումներ, որի արդյունքներով պատգամավորների ներկայացրած առաջարկությունները տրամադրվում են հայտատու մարմիններին՝ դրանց վերաբերյալ վերջիններիս դիրքորոշումները ստանալու նպատակով: Այնուհետև, ՀՀ կառավարությունը քննարկում է պետական բյուջեի նախագիծը և այն ներկայացնում ՀՀ ԱԺ:

Այս գործընթացից հետո, ՀՀ ՖՆ-ը մշակում և իր ինտերնետային կայքում տեղադրում է ՀՀ առաջիկա տարվա «Քաղաքացու Բյուջե»-ի նախագծի նախնական տարբերակը: ՀՀ ՖՆ-ը առաջիկա տարվա բյուջեի մասին օրենքի նախագծի հանրային քննարկումների արդյունքներով կազմված ամփոփաթերթի և նշված օրենքի նախագծի լրամշակված տարբերակի, ինչպես նաև առաջիկա տարվա «Քաղաքացու Բյուջե»-ի նախագծի լրամշակված տարբերակը տեղադրում է ՀՀ ՖՆ-ի կայքում: ՀՀ հանրային իշխանության մարմինները՝ ըստ ՀՀ ՖՆ-ի տրամադրած ձևաչափի՝ ներկայացնում են առաջիկա տարվա «Քաղաքացու Բյուջե»-ի նախագիծը, որը ՀՀ ՖՆ-ի կողմից մշակվում և հանրայնացվում է:

Բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկում և ընդունում

Կառավարությունը պետական բյուջեի նախագիծը ԱԺ է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն իննսուն օր առաջ, որի քննարկումն ԱԺ-ի նիստում սկսվում է ոչ ուշ, քան բյուջետային տարվան նախորդող նոյեմբեր ամսվա առաջին հերթական նիստերում:

ԱԺ-ի նախագահը խորհրդակցելով վարչապետի հետ, կազմում է գլխադասային և մյուս մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման ժամկետացանկը և այն ներկայացնում ԱԺ-ի խորհրդի հաստատմանը: Նախագծի նախնական քննարկումները տեղի են ունենում մշտական հանձնաժողովների և դրանց համատեղ նիստերում, որոնց մասնակցում են նաև Կառավարության անդամները և վարչապետի լիազորած անձինք, ինչպես նաև ժամկետացանկում նշված այլ անձինք⁵⁶:

Բյուջետային օրենսդրության, պետական բյուջեի հետ կապված հարցերի ԱԺ-ի գլխադասային հանձնաժողովը հանդիսանում է ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը⁵⁷:

Հարկ է նշել, որ ուսումնասիրելով ԱԺ-ի մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում ՀՀ 2022 և 2023 թվականի պետական բյուջեների մասին ՀՀ օրենքների նախագծերի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման և կառավարության կողմից փոփոխություններ կատարելու ժամկետացանկերը և անձանց ցանկերը, պարզ է դառնում, որ ԱԺ-ում ՔՀԿ-ները ընդգրկված չեն բյուջետային գործընթացներում: Բացի այդ, չեն կազմակերպվել խորհրդարանական լսումներ՝ առաջիկա տարվա բյուջեի նախագծի քննարկման նպատակով:

ԱԺ-ի նիստում պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը քննարկվում է ընդհանուր կարգով, որտեղ հիմնական և հարակից զեկույցներով հանդես են գալիս Կառավարության և այլ մարմիններին ներկայացուցիչները: Մինչև ԱԺ-ի կողմից նախագծի ընդունումը, պատգամավորները և խմբակցությունները ներկայացնում են իրենց առաջարկները:

⁵⁶ Տե՛ս օրինակ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում ՀՀ 2022 և 2023 թվականի պետական բյուջեների մասին ՀՀ օրենքների նախագծերի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման և կառավարության կողմից փոփոխություններ կատարելու ժամկետացանկերը և անձանց ցանկերը, որտեղ ՔՀԿ-ները ներառված չեն: Հասանելի են հետևյալ հղումներով. http://www.parliament.am/council/8/AJXV_062_24102022.pdf, http://www.parliament.am/council/8/AJXV_013_13102021_Havelvac_bjuge_2022.pdf

⁵⁷ <http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111218&lang=arm>

Բյուջեի մոնիթորինգ և գնահատում

Պետական բյուջեի նախագիծը, ի թիվս այլնի, ներառում է պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված ծրագրերի առկա (մշակված) արդյունքային (կատարողական) փաստացի, սպասվելիք և կանխատեսվող (համապատասխանաբար նախորդ, ընթացիկ և ծրագրերի միջոցառումների ավարտի համար նախատեսված բյուջետային տարիների վերջի դրությամբ) ցուցանիշները⁵⁸:

Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ԱԺ է ներկայացնում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը, որը ներառում է՝

- տեղեկություններ հաշվետու տարում հարկաբյուջետային քաղաքականության և համապատասխան օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ, որոնք ազդել են պետական բյուջեի կատարման արդյունքների վրա.
- պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի, ինչպես նաև հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ.
- տեղեկություններ հաշվետու տարում կառավարության պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով.
- տեղեկություններ հաշվետու տարում պետության արտաքին և ներքին պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ.
- պետական մարմինների կողմից պետական լիազորված մարմին ներկայացված տարեկան հաշվետվությունների համապատասխան տեղեկություններն այդ մարմինների գծով հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ծրագրերի և ծրագրերի միջոցառումների գծով կառավարության սահմանած արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ.
- այլ տեղեկություններ, որոնք կառավարությունն անհրաժեշտ է համարում պետական բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

Իր հերթին հաշվեքննիչ պալատը ՀՀ ԱԺ է ներկայացնում պետական բյուջեի կատարման ընթացիկ և տարեկան հաշվետվություններ ու եզրակացություններ: Եզրակացությունը բաղկացած է հետևյալ մասերից՝

- պետական բյուջեի կատարման վերաբերյալ կարծիք.
- հայտնաբերված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների, ինչպես նաև առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն, որը ներառում է՝
 - դրական եզրահանգում, եթե ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար, և էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել,

⁵⁸ Տե՛ս «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 19: Հասանելի է հետևյալ հղմամբ.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175826>

- ոչ լիարժեք եզրահանգում, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են, կամ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար,
- բացասական եզրահանգում, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են,
- հրաժարում եզրահանգում ներկայացնելուց, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Փաստաթուղթը կազմվում է օգտագործելով նույն տարվա պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները⁵⁹: Հաշվեքննիչ պալատը հաշվեքննության արդյունքների վերլուծության հիման վրա քննարկում է անհամապատասխանությունների և խեղաթյուրումների պատճառները, որի արդյունքում պետական մարմինները և ՏԻՄ-երը կարող է ներկայացնել առաջարկություններ, այդ թվում՝ ՀՀ իրավական ակտերի փոփոխման և (կամ) լրացման վերաբերյալ:

Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը, Հաշվեքննիչ պալատի եզրակացության առկայությամբ, քննարկվում և դրվում է քվեարկության ԱԺ-ում: Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության նախնական քննարկումներ կազմակերպվում են նաև մշտական հանձնաժողովներում:

Կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ՔՀԿ-ների կողմից բյուջեի կատարման վերաբերյալ այլընտրանքային մշտադիտարկում և գնահատումներ չեն կատարվել:

4.2. Բյուջետային գործընթացների շահերի պաշտպանության փորձը ՀՀ-ում

Վերջին երկու տարում Հայաստանում զգալի առաջընթաց է գրանցվել հանրային ֆինանսների կառավարման և մասնավորապես բյուջետավորման բարեփոխումների առումով: «Ծրագրային բյուջետավորման» ձևաչափի ներդրումը էականորեն փոխում է «պետական բյուջե» փաստաթուղթը և բյուջեների մշակման, կատարման, հաշվետվության և գնահատման էությունը՝ նոր հորիզոններ բացելով դրանց զարգացման և արդյունավետության համար: Սակայն բարեփոխումները կմնան չընկալված և անօգուտ, եթե տարբեր շահագրգիռ կողմերը և դերակատարները, թե՛ պետական համակարգի ներսում, և թե՛ հասարակությունում չկատարեն համարժեք քայլ-առաջ՝ պետական բյուջեն կարդալու, հասկանալու, քաղաքականության և

⁵⁹ Տե՛ս «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքը և «ՀՀ ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը հետևյալ հղումներով. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165069> , <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175794>

ծախսային ծրագրերի նպատակներն առանձնացնելու, արդյունքների արդյունավետության մշտադիտարկման և գնահատման առումներով⁶⁰:

Ֆինանսական և բյուջետային գրազիտության պատշաճ մակարդակը, ինչպես նաև բյուջետային գործընթացի տարբեր փուլերին շահագրգիռ կողմերի արդյունավետ մասնակցության պակասը դեռևս շարունակում են մնալ գործընթացի հիմնական բացերը: Կարևոր է բյուջետային գործընթացի տարբեր մասնակիցների դերերի և պարտականությունների հստակեցումը, հատկապես քաղաքացիական հասարակության տարբեր կառույցների և քաղաքացու դերակատարության գիտակցումը և կարևորումը, մասնակցության ընդլայնումը:

Այս առումով, ՀՀ ՖՆ-ը ձեռնամուխ է եղել մասնակցային բյուջետավորման ինստիտուցիոնալ և նորմատիվային շրջանակի ձևավորմանը և ներդրմանը: «Քաղաքացու բյուջեն»⁶¹ այս տրամաբանության շրջանակներում ձեռնարկված հաջորդ նախաձեռնությունն է: Նախկինում ևս, ՀՀ ՖՆ-ը բյուջետային տեղեկատվության պարզեցման փորձեր է իրականացրել: Սակայն տվյալ դեպքում խնդիրը որակապես փոխվել է. նախ փորձ է արվում բյուջեն իսկապես դարձնել առավել հասկանալի՝ որպես կառավարության ծրագրերը և ակնկալվող արդյունքները նկարագրող պարզ փաստաթուղթ, ապա նաև՝ տեղեկատվական հենք հանրային մասնակցության ընդլայնման համար:

«Քաղաքացու բյուջեի» առաջին նախագիծը մշակվել է Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի (ՏՁԿ) կողմից ՀՀ ՖՆ-ի պատվիրակմամբ: Գործողությունը նպատակ է ունեցել բավարարել տարիներ շարունակ ՏՁԿ-ի և ոլորտում ակտիվ այլ հասարակական կառույցների կողմից բարձրաձայնվող անհամաձայնությունները՝ նախկինում ՖՆ-ի կողմից թողարկվող «Համառոտ բյուջե» փաստաթղթի վերաբերյալ, այն շտկել, համապատասխանեցնել քաղաքացիական հասարակության և ծրագրային բյուջետավորման պահանջներին: Հաջորդող տարիներին ՀՀ ՖՆ-ը շարունակեց կիրառել նույն ձևաչափը:

Ընդհանուր առմամբ, ՏՁԿ-ն մեծ դերակատարում ունի Հայաստանում բյուջետային տեղեկատվության պարզեցման պրակտիկայում: Դեռևս 2005 թվականից ՏՁԿ-ը պարբերաբար իրականացրել է տարբեր ոլորտների, մասնավորապես՝ սոցիալական պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության ոլորտների պետական բյուջեների պարզեցումներ, ինչպես նաև իրականացվող քաղաքականությունների և առանձին բյուջետային ծրագրերի մոնիթորինգ և գնահատում:

Գնահատումների արդյունքները էական ազդեցություն են ունեցել բյուջետային այնպիսի ծրագրերի շահառուների վրա, ինչպիսիք են՝ **տնային տնտեսության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստները**, հանգեցնելով անապահովության գնահատման բանաձևի փոփոխությանը, **տնային պայմաններում տարեցների խնամքի ծառայությունները**, հանգեցնելով առավել խոցելի շահառուների ընդգրկման հաշվառման և ցուցանիշների սահմանմանը, **առաջնային առողջապահության ծառայությունները** խոչընդոտելով առանձին ծառայությունների մասով ծախսերի կրճատմանը, **գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունները**,

⁶⁰ Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված ՀՀ քաղաքացու բյուջեի օրինակը: Հասանելի է հետևյալ հղմամբ. https://minfin.am/website/images/website/byuje_amsakan/Citizen%20Budget%202020-final.pdf

⁶¹ Տե՛ս օրինակ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված Քաղաքացու բյուջեի օրինակ 2020 թվականին: Հասանելի է հետևյալ հղմամբ. https://minfin.am/website/images/website/byuje_amsakan/Citizen%20Budget%202020-final.pdf

քննարկումների դաշտ բերելով գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների արդյունավետության հարցեր և այլն⁶²:

Պետական բյուջեն կառավարության տարբեր քաղաքականություններն ամփոփող կարևոր ծրագրային փաստաթուղթ է, որն արտահայտում է, թե կառավարությունը հանրային ռեսուրսները ինչպե՞ս է նախատեսում օգտագործել, ո՞ր քաղաքական նպատակների համար, ինչպիսի՞ հանրային ծառայություններ և ի՞նչ ծավալով են մատուցվելու, և ի վերջո, ինչպիսի՞ արդյունքներ են ապահովվելու հանրության համար⁶³:

Պետական բյուջեն նախ և առաջ արտահայտում է հարկաբյուջետային քաղաքականությունը, որը կարող է համարվել արդյունավետ, եթե ապահովվում է հանրային միջոցների այնպիսի բաշխման և վերաբաշխման համակարգ, որը մի կողմից կերաշխավորի տնտեսության զարգացումը, մյուս կողմից՝ սոցիալական և անվտանգային կարիքների արդյունավետ հասցեագրումը:

Պետք է նշել, որ ԻՀԱ-ն կարևորելով բյուջետային գործընթացում մասնակցային մեխանիզմների ներդրումը և այդ դրանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության անհրաժեշտությունն ու նրանց կողմից փաստահեն շահերի պաշտպանության իրականացումը, 2018-2019 թվականներին առաջարկ էր ներկայացրել ՀՀ ՖՆ-ին առ այն, որ հաջորդող տարիներին բյուջետային գործընթաց սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշումներով նախատեսվող աշխատանքների ժամանակացույցերում նախատեսվի առանձին դրույթ, որով ոլորտային ՔՀԿ-ների ներգրավումը բյուջետային հայտերը կազմելու գործընթացում (նախքան հայտերը ՖՆ ուղարկելը) կկրի պարտադիր բնույթ:

Առաջարկը ընդունվեց⁶⁴: Այս առաջարկի հիման վրա, յուրաքանչյուր տարի ՀՀ վարչապետի կողմից ընդունվում է համապատասխան որոշում: Օրինակ՝ ՀՀ 2023թ. բյուջետային գործընթացը սկսելու մասին Վարչապետի որոշմամբ⁶⁵ սահմանված է, որ ըստ նախատեսված ժամանակացույցի՝ ՄԺԾՕ նախագծի (ներառյալ՝ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի) մշակման աշխատանքների շրջանակներում, տվյալ ոլորտներում շահագրգիռ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, բյուջետային հայտերի շուրջ քննարկումները հնարավորության դեպքում կազմակերպել առցանց ձևաչափով: Ժամանակացույցի 19-րդ կետով սահմանված է՝ ՄԺԾՕ նախագծի (ներառյալ՝ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի) մշակման աշխատանքների շրջանակներում բյուջետային հայտերի շուրջ քննարկումների անցկացում իրենց իրավասության ներքո գտնվող ոլորտներում շահագրգիռ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ) հետ և քննարկումների արդյունքների վերաբերյալ (ներառյալ՝ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ ամփոփաթերթ) տեղեկատվության ներկայացում ՀՀ ՖՆ, ժամկետը՝ մինչև 2022 թվականի ապրիլի 8-ը:

⁶² Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի գործունեությանը կարող էք ծանոթանալ հետևյալ հղմամբ. <https://www.edrc.am/?lang=hy>

⁶³ Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված ՀՀ քաղաքացու բյուջեի օրինակը: Հասանելի է հետևյալ հղմամբ. https://minfin.am/website/images/website/byuje_amsakan/Citizen%20Budget%202020-final.pdf

⁶⁴ Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի գրությունը առաջարկի ընդունման վերաբերյալ: Հասանելի է հետևյալ հղմամբ. https://armla.am/wp-content/uploads/2019/12/qaxaqacu_budget_ALA.pdf

⁶⁵ Տե՛ս օրինակ «ՀՀ 2023 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» ՀՀ վարչապետի թիվ 72-Ս որոշումը: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159682>

Ինչպես նշվեց վերևում, առաջարկ ընդունվեց, որից հետո «ՀՀ 2021 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» ՀՀ վարչապետի որոշմամբ նախատեսվեց մասնակցային գործընթացների ընդլայնում, մասնավորապես՝ ՔՀԿ-ների հետ ՀՀ հանրային իշխանության մարմիններ բյուջետային հայտերի վերաբերյալ պարտադիր հանրային քննարկումների իրականացում⁶⁶:

Միաժամանակ պետք է նշել, որ այս որոշումը միայն 2019 թվականին ապահովեց ՔՀԿ-ների բարձր մասնակցայնություն: Գործընթացը համակարգում էր ԻՀԱ-ն⁶⁷: Ոլորտային ՔՀԿ-ների մասնակցությամբ կազմակերպվեց ավելի քան 20 հանրային քննարկում տարբեր պետական կառավարման և ՏԻՄ-երի հետ⁶⁸: Իհարկե, ՔՀԿ-ների կողմից ներկայացված առաջարկների քիչ տոկոսը ընդունվեց տարբեր մարմինների կողմից: Սակայն, այս պրակտիկայի կայուն շարունակականության պարագայում, շահերի պաշտպանության գործողությունների, ՔՀԿ-ների՝ բյուջետային գործընթացում մասնակցելու և անհրաժեշտ հմտությունների ձեռք բերման վերաբերյալ կարողությունների զարգացման և այլ գործիքակազմի կիրառմամբ, ժամանակի ընթացքում հնարավոր կլին հասնել ավելի մեծ թվով պետական և տեղական մարմինների կողմից առաջարկների ընդունմանը, որն էլ իր հերթին կլիթաներ բյուջետային գործընթացում քաղաքացիական հասարակության նպատակային և արդյունավետ մասնակցությանը:

Ավելին, կարճ ժամանակում ունեցած պրակտիկան տանում էր նրան, որ ՔՀԿ-ների տեղական իշխանության մարմինների հետ մշակում էին Քաղաքացու բյուջեի նախագիծ⁶⁹: Թեև այս մասով հարկ է նաև նշել, որ առանձին համայնքի բնակիչների համար նախատեսված չեն

⁶⁶ ՔՀԿ-ների կողմից բյուջետային ոլորտի հանրային քաղաքականության փոփոխման վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ. <https://ccd.armila.am/15317.html>

⁶⁷ Տե՛ս նաև ՀՀ հանրային իշխանության և տարածքային կառավարման մարմինների բյուջետային հայտերի վերաբերյալ հանրային քննարկումները՝ ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացված «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ՔՀԿ-ների կողմից հանրային մասնակցությամբ: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://ccd.armila.am/13094.html>

⁶⁸ Տե՛ս օրինակ՝ հանրային քննարկում ՀՀ նախագահի աշխատակազմում՝ ՀՀ 2020թ. պետական բյուջեի ՀՀ նախագահի աշխատակազմի բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ հետևյալ հղմամբ. <https://ccd.armila.am/13371.html>

Հանրային քննարկում Շրջակա միջավայրի նախարարությունում՝ 2020-2022թթ միջնաժամկետ ծախսային ծրագրերի, ներառյալ 2020 թ-ի պետական բյուջեի հայտերի նախագծերի վերաբերյալ: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://ccd.armila.am/13405.html>

Հանրային քննարկում ԲԴԽ-ի և դատարանների 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի, ինչպես նաև 2020 թ-ի բյուջետային հայտի նախագծի վերաբերյալ: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://ccd.armila.am/13297.html>

Հանրային քննարկում Լոռու մարզպետարանում 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2020թ պետական բյուջեի հայտերի նախագծերի վերաբերյալ: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://ccd.armila.am/13408.html>

Հանրային քննարկում Սյունիքի մարզպետարանում քննարկվեց 2020-2022թթ միջնաժամկետ ծախսային ծրագրերի, ներառյալ 2020 թ-ի պետական բյուջեի հայտերի նախագծերի վերաբերյալ: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://ccd.armila.am/13442.html>

⁶⁹ Տե՛ս օրինակ Արեւի համայնքի քաղաքացու բյուջեի օրինակ, որը մշակվել է տեղական իշխանության մարմնի և «ՎԻՆԵԹ Հայաստան» կանանց ռեսուրս կենտրոնների ցանցի հետ համատեղ «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում: Հասանելի է հետևյալ հղմամբ. <https://ccd.armila.am/wp-content/uploads/2019/12/%D4%B1%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B5%D5%B6%D6%84%D5%AB-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D6%81%D5%B8%D6%82-%D5%A2%D5%B5%D5%B8%D6%82%D5%BB%D5%A5.pdf>

մասնակցային բյուջետավորման հնարավորություններ, որոնք կապահովեն համայնքի բյուջետային գործընթացում քաղաքացիների մասնակցությունը: Իսկ այս գործիքի առկայությունը հնարավորություն կտար համայնքի բնակիչներին/քաղաքացիներին ՏԻՄ կողմից ֆինանսավորվող ծրագրեր առաջարկել և քվեարկել դրանց համար:

Եզրակացություն

Մույն փաստաթղթի շրջանակներում կատարված **միջազգային փորձի ուսումնասիրությունը** հիմնականում ցույց է տալիս, որ ՔՀԿ-ների կողմից բյուջետային գործընթացում փաստահեն շահերի պաշտպանության իրականացումը կարող է արդյունավետ կատարվել մի քանի հմտությունների և քաղաքականությունների առկայության պարագայում՝

- *հմտությունների շրջանակը* կարող է ներառել՝ բյուջետային գրագիտության վերապատրաստումներ, բյուջեի վերլուծության, մշտադիտարկման և գնահատման կարողություններ, շահերի պաշտպանության իրականացման գործիքների տիրապետում, ռազմավարական պլանավորման և ներքին քաղաքականություններ մշակելու կարողություններ, որոշում կայացնողների հետ կառուցողական երկխոսելու և հաղորդակցման հմտություններ,
- *քաղաքականությունների շրջանակը* կարող է ներառել՝ ռազմավարական պլանը, որտեղ բյուջետային գործընթացներին մասնակցությունը և բյուջեների մշտադիտարկումը սահմանվում է որպես առանձին ռազմավարական նպատակ, ինքնագնահատման գործիքների ներդրումը և տարեկան զարգացման պլանը, ֆինանսական կայունության և հայթայթման պլանը, շահերի պաշտպանություն իրականացնելու պլանը:

Եթե ՔՀԿ-ներին հաջողվում է համատեղել բյուջետային քաղաքականության խնդրի վերաբերյալ խորը գիտելիքները բյուջեների, ռազմավարական պլանի և շահերի պաշտպանության ռազմավարության հետ, քաղաքականության վրա դրական ազդեցության հավանականությունը մեծանում է: Այդուհանդերձ, ինչպես նշում է Միջազգային բյուջետային գործընկերությունը՝ *«քաղաքացիական հասարակության՝ բյուջեի քննարկմանը մասնակցելու կարողությունը կարող է խափանվել իրավական, ինստիտուցիոնալ և քաղաքական խոչընդոտների պատճառով»*: Հետևապես, կարևոր է, որ նախքան համանման գործընթացներին ներգրավվելը՝ ունենալ խորը մասնագիտական և փորձագիտական կարողություններ, համագործակցության կայուն փորձ որոշում կայացնողների հետ, և ծանոթ լինել իրավական շրջանակին:

Միջազգային փորձը հիշատակում է նաև այնպիսի պրակտիկա, համաձայն որի բյուջեի խնդիրների վերաբերյալ հանրությանը հասանելի տեղեկատվության բացակայությունը խոչընդոտել է ազգային և տեղական այն կազմակերպությունների ջանքերին, որոնք փորձել մասնակցել հանրային ռեսուրսների օգտագործման բանավեճին: Որպես օրինակ՝ շուրջ 20 երկրներ, ներառված են Միջազգային բյուջետային գործընկերության բաց բյուջեների համաթվում, որը կառավարության բյուջեի թափանցիկության համեմատական չափանիշ է⁷⁰: Այդ երկրները նույնիսկ չեն հրապարակում կառավարության բյուջեի առաջարկը: Այդ պատճառով է, որ ՔՀԿ-ների ջանքերն այս ոլորտում հաճախ ընկավում են որպես թափանցիկության և հանրային տեղեկատվության հասանելիության համար «պայքար»:

Անդրադառնալով **հայաստանյան փորձի ուսումնասիրությանը**, հարկ է նշել, որ վեր հանված խնդիրները դիտարկվում են երկու մակարդակում:

⁷⁰ Տե՛ս «Քաղաքացիական հասարակության կողմից բյուջետային գործընթացի մոնիթորինգ» ուղեցույցը: Հասանելի է հետևյալ հղմամբ:

https://knowledgehub.transparency.org/assets/uploads/helpdesk/CSO_budget_monitoring_2016.pdf

Առաջինը՝ ՔՀԿ-ների մասնակցությունն է բյուջետային գործընթացներին: Այստեղ, պետք է նշել, որ ՔՀԿ-ները մասնակցելու իրական հնարավորություն ունեն ՄԺԾՕ նախագծի (ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի) մշակման աշխատանքների ընթացքում, երբ ՀՀ վարչապետի որոշմամբ ՔՀԿ-ների մասնակցությունը բյուջետային հայտերի շուրջ քննարկումներում դարձել է պարտադիր: Սակայն, ՔՀԿ-ների մասնակցությունը այսչափ չի կարևորվում օրենսդիր մարմնի կողմից: Ինչպես ցույց են տալիս կատարված հետազոտության աշխատանքները, ՔՀԿ-ները չեն հրավիրվում մասնակցելու պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկմանը՝ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի կողմից: Ինչպես երևում է ԱԺ խորհրդի կողմից ընդունված ժամկետացանկում, քննարկումներին մասնակցում են միայն պաշտոնատար անձինք:

Երկրորդը՝ բյուջետային գործընթացում շահերի պաշտպանություն իրականացնելու ՔՀԿ-ների կարողությունների և հմտությունների պակասն է: Այս մակարդակում վեր հանված հիմնական խնդիրներից է բյուջեների կատարողականի վերաբերյալ ՔՀԿ-ների կողմից կատարած այլընտրանքային մշտադիտարկումների և գնահատումների, այլընտրանքային զեկույցների և փաստարկված առաջարկությունների, շահերի պաշտպանության փորձի բացակայությունը: Քիչ է նաև այս ոլորտում մասնագիտացված ՔՀԿ-ների թիվը, չնայած այն հանգամանքին, որ հետաքրքրվածություն ցուցաբերվել է նրանց կողմից: Կարողությունների պակասից է նաև այն ցուցանիշը, որ քիչ թիվ են կազմում բյուջետային ոլորտում ՔՀԿ-ների կողմից փոփոխված կամ մշակված հանրային քաղաքականությունները:

Վերոգրյալի հիման վրա, վերհանված խնդիրների լուծման նպատակով ներկայացվում են հետևյալ առաջարկները.

- ուժեղացնել ՔՀԿ-ների հմտությունների շրջանակը, վերապատրաստումներ կազմակերպել բյուջետային գրագիտության, բյուջեի վերլուծության, մշտադիտարկման և գնահատման կարողությունների, փաստահեն շահերի պաշտպանության իրականացման գործիքների վերաբերյալ,
- հզորացնել ՔՀԿ-ների ներքին կարողությունները ուղղված՝ ռազմավարական պլանավորման և ներքին քաղաքականությունների, այդ թվում՝ ռազմավարական պլանի, ինքնագնահատման գործիքների, տարեկան զարգացման պլանի, ֆինանսական կայունության և հայթայթման պլանի, փաստահեն շահերի պաշտպանություն իրականացնելու պլանի մշակելուն,
- հզորացնել ՔՀԿ-ների ներքին հմտությունները՝ ուղղված որոշում կայացնողների հետ կառուցողական երկխոսելուն և արդյունավետ հաղորդակցելուն:

Հղումներ

Միջազգային և ներպետական իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրության, ընդունված՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին
2. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունված՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին
3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2003 թվականի սեպտեմբերի 23-ին
4. «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2022 թվականի դեկտեմբերի 8-ին
5. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին ՀՀ օրենք, ընդունված՝ 2022 թվականի նոյեմբերի 16-ին
6. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2009 թվականի հուլիսի 10-ին
7. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 1997 թվականի հունիսի 24-ին
8. «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1716-Լ որոշում, ընդունված՝ 2019 թվականի նոյեմբերի 28-ին
9. «ՀՀ 2023 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» ՀՀ վարչապետի թիվ 72-Ա որոշում
10. «ՀՀ 2024 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» ՀՀ վարչապետի 86-Ա որոշում
11. Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման և կառավարության կողմից փոփոխություններ կատարելու ժամկետացանկերը և անձանց ցանկերը հաստատելու մասին ՀՀ ԱԺ խորհրդի 2021 թվականի որոշում
12. Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման և կառավարության կողմից փոփոխություններ կատարելու ժամկետացանկերը և անձանց ցանկերը հաստատելու մասին ՀՀ ԱԺ խորհրդի 2022 թվականի որոշում

Զեկույցներ, ուսումնասիրություններ, հետազոտություններ և այլն

1. «Բյուջեի շահերի պաշտպանության հնարավորությունների և շահագրգիռ կողմերի վերլուծություն»: Միջազգային բյուջետային գործընկերություն
2. 2021 թվականի Բաց բյուջեի հետազոտություն: Միջազգային բյուջետային գործընկերություն
3. Պատրաստվելով ոլորտային բյուջետային քարտզությանը: Ուղեցույց քաղաքացիական հասարակության և համայնքների համար

4. 2022 թվականի Կոռուպցիայի ընկալման համաթիվ: «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպություն
5. Կրթության ոլորտում աշխատող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար բյուջետային գործընթացի ուղեցույց
6. Առողջապահության ոլորտում բյուջեի շահերի պաշտպանության իրականացման ուղեցույց՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար
7. «Քաղաքացիական հասարակության կողմից բյուջետային գործընթացի մոնիթորինգ» ուղեցույց
8. «Բյուջետային գործընթացի շահերի պաշտպանության կողմնորոշում»: Միջազգային բյուջետային գործընկերություն
9. «Քաղաքացիական հասարակության մասնակցության խթանում քաղաքականության և բյուջետային գործընթացներում» ձեռնարկ
10. Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության գնահատում
11. Բաց կառավարման հռչակագիր
12. ԲԿԳ-ի Նվազագույն իրավասության չափանիշներ
13. ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի գրությունը բյուջետային ոլորտի հանրային քաղաքականությունը փոփոխելու առաջարկի ընդունման վերաբերյալ
14. Քաղաքացիների բյուջեները մշակելու համար ուղեցույց կառավարության համար: Միջազգային բյուջետային գործընկերություն
15. Մասնակցային բյուջետավորման ուղեցույց
16. Այլընտրանքային բյուջեների մշակման ուղեցույց
17. Կանադական քաղաքականության այլընտրանքների կենտրոնի կողմից մշակած Կանադայի այլընտրանքային ֆեդերալ բյուջեներ
18. Միացյալ Թագավորության Հարկաբյուջետային հետազոտությունների կողմից ներկայացված այլընտրանքային հարկային առաջարկներ
19. «Սոցիալական աուդիտը՝ որպես բյուջեի մոնիթորինգի իրականացման գործիք» զեկույց
20. Միջազգային բյուջետային գործընկերության վարկանիշային աղյուսակներ
21. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակած ՀՀ քաղաքացու բյուջեի օրինակ
22. ՔՀԿ-ի և տեղական իշխանության կողմից մշակած Արենի համայնքի քաղաքացու բյուջեի օրինակ
23. Մասնակցային բյուջետավորման հասկացությունը

Ինտերնետային ռեսուրսներ

1. ՀՀ ազգային ժողովի կայք, <http://www.parliament.am/>
2. ՀՀ ֆինանսների նախարարության կայք, <https://www.minfin.am/hy>
3. Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատ, <http://armsai.am/>
4. Միջազգային բյուջետային գործընկերություն, www.internationalbudget.org
5. Հնդկաստանի Վերահսկիչ և Գլխավոր աուդիտոր, <https://cag.gov.in/en>
6. Ինդոնեզիայի Աուդիտի խորհուրդ, <https://www.bpk.go.id/en>
7. Ղազախստանի Բարձրագույն աուդիտորական պալատ, <https://www.gov.kz/memleket/entities/esep?lang=en>
8. Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության ծրագիր, <https://www.pefa.org/about>

9. ԲԿԳ-Հայաստան նախաձեռնություն, <https://ogp.gov.am/hy/>
10. Կրթության ոլորտի օրենսդրության էլեկտրոնային գրադարան, <https://escs.am/am/category/ra-laws>
11. Վաշինգտոն Փոստ լրատվական կայք, <https://www.washingtonpost.com/>
12. «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի կայք, <https://ccd.armla.am/>